20 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2012 ՀԻՆԳՇԱԲԹԻ 228(5080)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651

# Ինչո՞ւ սիրիահայերը չպաշտպանեն նախագահ Ասադի վարչակարգին

## *Երբ Թուրքիան անվերապահորեն աջակցում է սիրիական այսպես կոչված ընդդիմությանը*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

**Դեկտեմբերի 18-ին, Սիրիայի զարգացումներին անդրադառնալիս, նշել էինք, որ այնտեղ կանխորոշվում է տարածաշրջանի քաղաքական ճակատագիրը: Սակայն դա ամենեւին էլ չի ենթադրում երկրի ճակատագրի կանխատեսելիությունը, քանի որ «Ազատ Սիրիայի բանակի» վարձկաններն առ այսօր շարունակում են կռիվները նախագահ Բաշար Ասադի կառավարական զորքերի դեմ՝ դառնալով ավերածությունների եւ արյունահեղության պատճառը երկրում:**

**Անկանխատեսելի է նաեւ այն, թե ե՞րբ կդադարեն մոտ 2 տարվա վաղեմություն ունեցող այս կռիվները: Թեեւ նախորդ օրը, կրկնելով «Հզբոլլահի» գլխավոր քարտուղար Հասան Նասրալլահին, պաշտոնական Թեհրանը հայտարարությամբ բացառեց նախագահ Ասադի վարչակարգին հաղթելու սիրիական ընդդիմության հնարավորությունը, սակայն նույն օրը Ռուսաստանը բալթյան նավատորմի ռազմանավեր ուղարկեց Միջերկրական ծով՝ տարհանելու Սիրիայից Ռուսաստանի քաղաքացիներին:**

**Սիրիայում գտնվող ռուսաստանցիների տարհանման լուրերը սիրահոժար տարածում է արեւմտյան մամուլը: Հակառակ դրան, ռուսական եւ սիրիական կողմերը բալթյան նավատորմի ուղարկումը Միջերկրական ծով պայմանավորում են ռուսաստանցիներին սիրիական ընդդիմության ոտնձգություններից պաշտպանելու նկատառումներով: Հիշեցման կարգով նշենք, որ մինչ այդ Ռուսաստանը հայտարարել էր Ասադի վարչակարգին պաշտպանելու համար Սիրիա զորք մտցնելու պատրաստակամության մասին:**

**Այլ կերպ, Սիրիայի քաղաքական զարգացումների առնչությամբ տարածվող տեղեկատվությունը բավականին աղոտված է, ուստի չի արտացոլում ստեղծված իրավիճակի ճշգրիտ պատկերը երկրում: Սակայն անկախ տեղեկատվության աղոտվածությունից, Սիրիա զորք ուղարկելու կամ ռուսաստանցիներին ռուսական նավատորմի աջակցությամբ սիրիական ընդդիմության ոտնձգություններից պաշտպանելու նկատառումներն ինքնին կասկածի տակ են դնում երկրում իրավիճակը վերահսկելու Ասադի վարչակարգի կարողությունները:**

**Սա մտահոգիչ հանգամանք է տարածաշրջանի, Սիրիայի տարածաշրջանային բարեկամների եւ հատկապես շուրջ 60 հազար սիրիահայերի համար, որոնք ավելի քան 40 հազարը բնակվում է Հալեպում:**

**Համայնքի համար այսպես կոչված հեղափոխությունների միջոցով իրականացված իշխանափոխությունների կործանարար հետեւանքների մասին սիրիահայերը գիտեն դեռեւս Հորդանանի, Եգիպտոսի կամ Լիբանանի փորձություններից: Նրանք քաջատեղյակ են նաեւ Սիրիան արտաքին միջամտության թատերաբեմ դարձնելու եւ սիրիահայ համայնքին կազմալուծելու Թուրքիայի նկրտումներին: Ի դեպ, Սիրիայում դեռեւս որեւէ իշխանափոխություն կամ «հեղափոխություն» չի եղել, բայց եւ այնպես ընդդիմության ոտնձգությունների հետեւանքով Հոմս քաղաքն արդեն դատարկվել է քրիստոնյա բնակիչներից:**

*Տես էջ 5*

# Նախագահ Սարգսյանը ՀԱՊԿ գործընկերներին հիշեցրեց նրանց պարտավորությունները եւ... Ադրբեջանի մասին

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Ուզբեկստանը պաշտոնապես դադարեցրեց ՀԱՊԿ-ին իր անդամակցությունը: Այդ մասին, ինչպես փոխանցում է ՌԻԱ «Նովոստի» գործակալությունը, հաղորդել է Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն՝ ընդգծելով. «Ուզբեկստանն այլեւս հնարավորություն չի ունենա վերականգնելու անդամակցությունը կազմակերպությանը»: Հիշեցնենք, որ ուզբեկները դեռ այս տարվա ամռանը հայտարարել էին ՀԱՊԿ-ից դուրս գալու իրենց ցանկության մասին, իսկ Լուկաշենկոյի՝ Տաշքենդին էլ երբեք հետ չվերցնելու հայտարարությունը հիմնավորված է այն հանգամանքով, որ Ուզբեկստանը անցյալում՝ 1999-ին մեկ անգամ եւս դուրս էր եկել ՀԱՊԿ-ից, սակայն 2006-ին վերականգնել էր իր անդամակցությունը:



Փաստորեն այս պահին ՀԱՊԿ անդամ երկրներն են Հայաստանը, Ռուսաստանը, Ղազախստանը, Բելառուսը, Ղրղզստանը եւ Տաջիկստանը, հենց այս երկրների նախագահներն ու արտաքին, ինչպես նաեւ պաշտպանական գերատեսչությունների ղեկավարները, ԱԽ քարտուղարները այս օրերին հավաքվել են Մոսկվայում՝ ՀԱՊԿ երկրների ղեկավարների հերթական գագաթաժողովին, Մոսկվայում է նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

*Տես էջ 2*

# Էթիկայի հանձնաժողովն էլ արդեն մեծամասնության սրտով կլինի

**Երեկ քիչ մնաց տապալվեր մեծամասնության նախաձեռնությամբ ԱԺ կանոնակարգ-օրենքի այն փոփոխությունը, որով փոխվում է էթիկայի հանձնաժողով կազմելու կարգը, քանի որ ընդդիմադիրները հայտարարել էին, որ չեն մասնակցում քվեարկությանը: Ամփոփիչ ելույթում նախագծի համահեղինակ Արփինե Հովհաննիսյանը նշեց հանձնաժողովի նոր կազմության ձեւաչափը՝ 3+3+1 (իշխանության 3 տեղ, գումարած ընդդիմադիր խմբակցությունների մեկական տեղ եւ ԲՀԿ-ի 1 տեղ), ինչպես նաեւ նշեց, որ հանձնաժողովի անդամի կողմից վետո դնելու իրավունքը հանվել է: Նա նաեւ փոխանցեց, որ նախագծի մյուս հեղինակ Դավիթ Հարությունյանը պատրաստ է բանավիճել ում հետ եւ որտեղ ուզեն: Ավելի ուշ՝ նշված ձեռնոցը վերցրեց Նիկոլ Փաշինյանը՝ ասելով, որ պատրաստ է հեռուստատեսությամբ բանավիճել Դ. Հարությունյանի հետ: Ի դեպ, Ն. Փաշինյանն ասում էր, որ 90 տոկոսով նոր նախագիծ է քվեարկվում: ՀԱԿ-ի տեսակետն էլ ներկայացրեց Լեւոն Զուրաբյանը, որը դեմ էր մեծամասնության փորձերին՝ վերահսկողություն հաստատել էթիկայի հանձնաժողովի նկատմամբ, այնպես որ ՀԱԿ-ը չի մասնակցի քվեարկությանը, իսկ հանձնաժողովի աշխատանքին մասնակցելու հարցը կքննարկեն:**

**ՀՅԴ ներկայացուցիչ Ա. Ռուստամյանը, չնայած նշեց, որ քվեարկությանը չեն մասնակցելու՝ վետոյի իրավունքն էր հանվել, սակայն հանձնաժողովի աշխատանքին մասնակցելու են, քանի որ մի շարք ընդունելի փոփոխություններ են եղել առաջին ընթերցումից հետո: Ընդունելի դրույթների մասին նշեց նաեւ ԲՀԿ-ից Նաիրա Զոհրաբյանը, այնպես որ հանձնաժողովում ԲՀԿ-ն եւս կշարունակի աշխատել, բայց եւ՝ քվեարկությանը նույնպես չմասնակցելու մասին հայտարարվեց: Ու երբ Ռուբեն Հակոբյանն էլ ասաց, որ «Ժառանգությունը» չի մասնակցի քվեարկությանը, հասկանալի դարձավ, որ քվորումի խնդիր կարող էր առաջանալ: Դա տեղի ունեցավ ժամը 16-ի ընդմիջումից առաջ, ու ՀՀԿ խմբակցության հարեհաս ղեկավար Գալուստ Սահակյանը 20 րոպե ընդմիջում խնդրեց: Այդ ընդմիջումն ավարտվեց ժամը 16-ի մոտակայքում, մեկ-երկու րոպե կար մինչեւ հիմնական ընդմիջում: Սակայն քվեարկությունը տեղի ունեցավ երկու միացված ընդմիջումներից հետո, երբ դահլիճ եկան մի շարք բացակա ՀՀԿ-ականներ: Փոփոխությունները 70 կողմ, 11 դեմ, 17 ձեռնպահ ձայներով ընդունեցին:**

**Անհասկանալի է մնում, թե ինչպե՞ս կաշխատի էթիկայի հանձնաժողովը նոր կարգով եւ կմնա՞ արդյոք նրա նախագահ Ն. Փաշինյանը:**

Մ. Խ.

# «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» ծրագրից օգտվողների թիվը մոտենում է 1000-ի

«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի շրջանակներում հաստատվել է 987 վարկ՝ ընդհանուր 7 մլրդ 220 մլն դրամ ծավալով: 491 վարկերը հաստատվել են, Երեւանում են հատկացվել, 484-ը՝ մարզերում: Այս մասին երեկ վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի ունեցած Ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի նիստի ժամանակ հայտնել է սպորտի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար **Արսեն Քարամյանը**:

Կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից ստացված հաղորդագրության համաձայն, խորհուրդը նախ ամփոփել է 2009-2012 թվականներին իրականացված աշխատանքները, ներկայացվել է Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի երկրորդ՝ վերլուծական մասը, ապա քննարկել է Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թթ. ռազմավարությունը եւ միջոցառումների ծրագիրը: Վարչապետը հանձնարարել է լրամշակել այն, որից հետո ներկայացնել կառավարության հաստատմանը:

Ա. Մ.

# Պատրիկ Դեւեջյանը վերընտրվել է Ֆրանսիայի խորհրդարանի պատգամավոր

«Nouvelles d'Arménie»-ի փոխանցմամբ՝ նախորդ կիրակի Օ՛դը Սենի գլխավոր խորհրդի նախագահ, հայազգի Պատրիկ Դեւեջյանը հաղթել է 13-րդ օկրուգում կայացած պատգամավորական ընտրություններում: 60.03 տոկոսով նա առաջ է անցել իր մրցակից Ժյուլիեն Լանդֆրիդից, որը ստացել էր ձայների 39.97 տոկոսը: Այս տարի Դեւեջյանը երկրորդ անգամ է մասնակցում ընտրությունների եւ հաղթում: Առաջինի ժամանակ Սոցիալիստական կուսակցության աջակցությունը վայելող Լանդֆրիդը Դեւեջյանին զիջում էր 191 ձայնով: Սակայն այդ ժամանակ Սահմանադրական խորհուրդը Դեւեջյանի ընտրությունը չեղյալ համարեց, եւ երկրորդ անգամ նշանակված ընտրություններում Դեւեջյանն ապացուցեց իր ժողովրդականությունը: Դեւեջյանն այդ օկրուգից պատգամավոր է ընտրվում 1988-ից ի վեր:



68-ամյա Դեւեջյանի քաղաքական կարիերան սկսվել է դեռեւս ուսանողական տարիներից, երբ նա դարձավ աջակողմյան կուսակցության անդամ: Դեւեջյանը Սարկոզիի գաղափարակիցներից էր: 2002-2005թթ. նա Ֆրանսիայի տնտեսական զարգացման նախարարն էր:

Ֆրանսահայ քաղաքական գործիչը միշտ էլ հպարտացել է իր հայկական արմատներով եւ պահպանել հարաբերությունները Հայաստանի եւ Ֆրանսիայում հայ համայնքի հետ:

Նա Ֆրանսիայում ցեղասպանության ճանաչման առաջամարտիկն է եղել եւ իր հարցազրույցներում միշտ անդրադարձել է այդ թեմային:

Նախորդ տարի, երբ Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը հակասահմանադրական որակեց Սենատի՝ Հայոց ցեղասպանության ժխտում քրեականացնող օրինագիծը, Դեւեջյանը թուրքական «Միլիեթ» թերթին տված հարցազրույցում ասաց, որ չի հուսահատվել կամ հիասթափվել: Թուրք լրագրողի հարցին՝ ինչքա՞ն է պայքարելու օրինագծի ընդունման համար, Դեւեջյանն ասել է. «Մինչեւ մահ: Սա շատ հոգնեցուցիչ է, սակայն պատվի խնդիր է»:

2010-ին այցելելով Հայաստան՝ Դեւեջյանը «Հայաստան» համահայկական հիմնադրամի գրասենյակում կայացած հանդիպմանը կարեւորեց Հայաստան-սփյուռք համագործակցությունը՝ շեշտելով, որ այսուհետեւ ամեն տարի 500.000 եվրո դրամաշնորհ կտրամադրվի Հայաստանին՝ միտված գյուղատնտեսության զարգացմանը:

Այդ գումարով Տավուշի մարզում 15 կմ երկարությամբ ջրանցք է բացվել, որը կրում է «Հայ-ֆրանսիական բարեկամություն» անունը: Այդ ջրանցքի շնորհիվ Տավուշի մարզի Խաշթառակ, Լուսահովիտ եւ Դիտավան համայնքների ավելի քան 600 հեկտար հող արդեն ոռոգվում է:

Հ. Հ.

ԱԶԳ **Ընթացիկ**

# Որոնենք մարդուն

Ամեն, ամեն օր մի՞թե հնարավոր է գրել այն մասին, թե ո՞վ կառաջադրվի նախագահի թեկնածու, ո՞վ ում հետ է քաղաքական առեւտուր անում, ո՞վ մրցակցին շարքից հանեց, ո՞վ ում հետ է սակարկում: Մի՞թե Հայաստան աշխարհը կազմված է միայն ԿԸՀ-ից, քաղաքական գործիչներից ու կուսակցություններից, ընդդիմությունից եւ իշխանությունից: Մենք վաղուց արդեն անգիր գիտենք` ի՞նչ բառապաշար ունի այս կամ այն քաղաքական գործիչը, ի՞նչ կոստյում է սիրում, ո՞ւմ է սիրում եւ ո՞ւմ է ատում, երբ շնչեց, երբ արտաշնչեց... ի սեր աստծո: Իսկ ի՞նչ է մտածում, ուտում, հագնում Գեղարքունիքի մարզի Ծափաթաղ գյուղի բազմանդամ ընտանիքի միակ զավակ Կոլիկը, որ մանկությունից մեն-մենակ տանջվում էր` քույրերի ու մոր հոգսին հասնելու համար, մինչեւ բանակ գնաց:

Ու հիմա քույրերն ու մայրը մենակ են ցախ հավաքում, որ չմրսեն սարի ցուրտ եղանակին: Դա՛ պիտի հետաքրքրեր մեզ: Ամեն օր ինտերվյու ենք ուզում Լֆիկ Սամոյից, Թոխմախի Մհերից (նա էլ չի տալիս ու դեռ կոպտում է լրագրողին), էլ չգիտեմ` գեներալ Սեյրանից, բայց չենք իմանում, թե ո՞նց է յոլա գնում Աշոցքի շրջանի Գոգավան գյուղի բնակիչ ուստա Մանուկը, որի զավակները արտերկրում են, իսկ ինքը օր ծերության պետք է ընտանիքի հոգսը հոգա: Ահա այսպես մեկ-մեկ արթնանում է քնած իրականությունը մեր մեջ` դեմքից-դեմք, զգալու համար, որ այսպես չի լինի, որ մեր կայնքի հերոսը դարձրել ենք մի բուռ քաղաքականներին, մի ձեռքի մատների չափ օլիգարխներին, Քիմ Քարդաշյանին, Անժելա Սարգսյանին ու «Դժվար ապրուստի» Գոռին ու Էլենին: Բայց երկրի մեջքը պահող հասարակ մարդու մասին շատ քիչ բան գիտենք, ու նրանց մասին պատմությունները սկսվում են, երբ ծայրահեղացված վիճակների լուրն ենք առնում, թե` այսինչն այնինչ պատճառով ինքնասպան եղավ, այնինչն իրեն նետեց կամրջից, թե 20-ամյա տղան սպանել է 43-ամյա մորը: Ու սկսվում է պատմությունների շարքը, թե հոգեկան էր, մանավանդ որ ոստիկանություն էին տարել, ագրեսիվ վարք էր ցույց տվել:

Է, ո՞ւմ տանես մեր ոստիկանություն, որ հոգեկան չդառնա: Կամ ո՞վ լսի, որ 2003-ից ամբաստանվող, հետագայում էլ դատապարտված Մատաղիսի գործով «հանցագործների» հանդեպ արդարացման դատավճիռը կայացվել է հիմա, ու դուրս չգա հունից. ուրեմն` 10 տարի է պետք, որ արդարությունն այս երկրում գոնե մի դեպքով հաղթանակի: Էլ ո՞նց մարդիկ չխելագարվեն կամ հոգեկան չդառնան: Ամեն սխալ դատավճիռ կամ կեղծ ամբաստանություն, ուրեմն, պետք է տասնամյա փորձություն անցնի, ճակատագրեր խեղվեն, որ այս երկրում մի բան տե՞ղը գա: Տարիներ առաջ մի ասուլիսի Սերժ Սարգսյանին առիթ եղավ հարցնելու, թե արդյո՞ք հետամուտ է լինելու Մատաղիսի գործով արդար քննության, ու դրական պատասխան ստացանք: Բայց դրանից հետո են կայացվել անարդար վճիռներն այս գործով, ու փաստորեն Սերժ Սարգսյանի խոստման գինը մոտավորապես 10 տարի է: Ո՞վ պետք է հատուցի երիտասարդ մարդկանց կորցրած տարիները, ով պետք է պատասխանի այն ժամանակ պաշտպանության նախարարի, այժմ երկրի ղեկավարի` ժամանակին տված խոստման պատիվը տարիներ «սառեցված» պահելու համար: Մի՞թե անցած շաբաթ մարզահամերգային համալիրում նախագահ Սարգսյանի հնչեցրած խոստումներից յուրաքանչյուրի գինն այդքան ծանր է լինելու...

Ո՞վ պետք է շփացած օլիգարխին հասկացնի, որ եթե հին շորերով մարդ է մտնում նրան պատկանող խանութ, նրա անվտանգությունը չպիտի այնքան հաբռգի, որ դուրս հրավիրի մարդուն, իբր աղքատը, մի տես է, էնքան փող չի ունենա, որ օլիգարխի սիրուն փաթաթած, բայց մեջն աղբ ապրանքներն առնի: Կամ ո՞վ պիտի հենց նրան դուրս հրավիրի, քանի որ նոր տարվա շեմին ամեն ապրանք իր էդ զիզի-բիզի խանութում մի 30 տոկոսով թանկացնում է ու փող գռփում, օգտվելով այդ ամենը նկատելու իրավասու մարդկանց հորանջոցից:

21-րդ դար, «աշխարհի վերջից» հինգ րոպե պակաս, բայց այդ համաշխարհային կատակի մեջ մեր այս փոքրիկ երկրի կյանքի մեջ ամեն րոպե պատահող փոքրիկ աշխարհի վերջեր` գթասրտության ու հոգածության աչքերից հեռու ամեն ընտանիքում ու մարդ արարածի մոտ: Նայենք մարդու աչքերի մեջ: Մեր եղբոր` մերձավորի ու հեռավորի: Վերադառնանք հայ մարդուն ու նրա հոգսին իսկապես` էդ կուսակցական խաղերից, քաղաքական կոմերցիայից հեռու: Հրանտ Մաթեւոսյանին հայտնաբերենք նորից, որ բոլորինն էր` անկախ քաղաքական ու դասային պատկանելությունից, ու դեպի մարդն էր` սովորական: Ու մեզ էր մոտեցնում սովորական մարդուն, սովորեցնում սիրել նրան: Որոնենք նրան` մաթեւոսյանաբար. *«Մարդիկ եթե չլինեին` աշխարհը տխուր կլիներ: Շատ խոտ կլիներ, խոտերի միջով գետը կգնար, սպիտակ թիթեռը խոտերի վրայով դեսուդեն կքշվեր... տխուր ու գեղեցիկ կլիներ: Հիմա ոչ տխուր է, ոչ էլ գեղեցիկ, ոչ էլ գիտես ինչ անես: Ինչո՞ւ է պտտվում բազեն: Ինչո՞ւ են կանգնած ծառերը: Կանգնած են ու միայն կանգնած են: Պտտվեց-պտտվեց ու, ասենք թե, ընկավ ու մի լոր խփեց, հետո՞: Հետո դարձյալ պտտվում է: Երբ պտտվում է` գեղեցիկ ու տխուր է, չգիտես ինչ իմաստ, բայց գեղեցիկ ու տխուր մի իմաստ է լինում: Ինչպե՞ս է առաջացել երկիրը, ո՞ւր են գնում գետերը, ի՞նչ է մտածում ձին` երբ չի արածում եւ չի շարժվում, այլ ժամերով կանգնած մտածում է, ո՞ր ծովից ինչ անտառների վրայով են գալիս ամպերը, ինչո՞ւ երեկոները լինում են այդպես տխուր, մտածկոտ ու ծանր, իսկ առավոտները` այդպես մաքուր ու հիմար, ինչո՞ւ մեր հայ ժողովուրդը, երբ տափաստաններն ազատ էին, չի գնացել, գնացել, գնացե՜լ մինչեւ մեծ ծովը դեմը կտրի, այլ մնացել է այս ձորի մեջ. որտե՞ղ է վերջանում աշխարհը, ինչո՞ւ է թպրտում, ի՞նչ է ուզում մեր սիրտը: Հետո այդ բազեին նայում ես մոտիկից` եւ ձեռքերդ քաշվում են թեւքերիդ մեջ-կտուցը, մագիլները, աչքերը ճանկռտում են»:*

*Հրանտ Մաթեւոսյան, «Սկիզբը»*




**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՄՈՍԿՎԱ

# Նախագահ Սարգսյանը ՀԱՊԿ գործընկերներին հիշեցրեց նրանց պարտավորությունները եւ... Ադրբեջանի մասին

*1-ին էջից*

## «Հարավային Կովկասում անվտանգության լրջագույն սպառնալիքը Ադրբեջանի դիրքորոշումն է»

Նախագահ Սերժ Սարգսյանը գագաթնաժողովի ընթացքում ունեցած իր ելույթում, ընդգծելով, թե «քսան տարի առաջ մեր երկրների ռազմավարական ընտրությունը ճիշտ էր եւ արդարացված», նկատի ունենալով ՀԱՊԿ-ին անդամակցությունը, ինչպես նաեւ շնորհակալություն հայտնելով Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւին` 2012-ին ՀԱՊԿ-ում Ղազախստանի արդյունավետ նախագահության համար, ու կազմակերպությունում եկող տարվանից նախագահությունը ստանձնող Ղրղզստանի նախագահ Ալմազբեկ Աթամբաեւին հաջողություններ մաղթելով, ասել է. «Հարավային Կովկասում անվտանգության լրջագույն սպառնալիքը շարունակում է մնալ Ադրբեջանի ունեցած դիրքորոշումը»: Հայաստանի նախագահը շեշտել է, որ Բաքվի հետ անգամ ձեռքբերված պայմանավորվածությունները` միջադեպերի հետաքննության մեխանիզմի ստեղծումն ու դիպուկահարների դուրսբերումը, պաշտոնական Ադրբեջանի կողմից տորպեդահարվում են»: Նախագահն անդրադարձել է նաեւ ադրբեջանական քարոզչությանը, երբ «մի ամբողջ սերունդ դաստիարակվում է այլատյացության ու անհանդուրժողականության մթնոլորտում». «Ադրբեջանում հայի սպանությունը հանցագործություն չի համարվում, եւ սա 21-րդ դարում` ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ երկրում», ընդգծել է ՀՀ նախագահը` գործընկերներին հիշեցնելով «փոքրոգի մարդասպան» Ռամիլ Սաֆարովի հերոսի կերպարի կերտումը: «Ադրբեջանի նախագահը հրապարակավ հայտարարում է, որ աշխարհի բոլոր հայերը Ադրբեջանի թշնամիներն են, իսկ Երեւանը, որը շուտով իր հիմնադրման 2800-րդ ամյակն է տոնելու, հնագույն ադրբեջանական հող է: Նա հայտարարում է, թե զինադադարի ռեժիմի խախտումը վարքի նորմ է, քանի որ պատերազմը դեռ ավարտված չէ` մոռանալով, թե ով էր խնդրում ու առաջինը ստորագրեց այդ զինադադարը», մասնավորաբար ասել է ՀՀ նախագահը` ՀԱՊԿ անդամ երկրների իր գործընկերներին: Սերժ Սարգսյանը հատկապես կարեւորել է դաշնակիցներին` վերջիններիս պարտականությունների մասին հիշեցնում անելը: Հայաստանի նախագահը, ուշադրություն հրավիրելով, որ եկող տարի ինչպես ՀԱՊԿ-ում, այնպես էլ թուրքախոսու երկրների միությունում նախագահությունը ստանձնելու է Ղրղզստանը, ասել է. «Այս առումով պետք է նշեմ, որ ցանկացած հայ դիվանագետ, առանց մայրաքաղաքի հետ համաձայնեցնելու գիտի, որ չպետք է աջակցի որեւէ նախաձեռնության, որը շոշափում է ՀԱՊԿ գծով մեր դաշնակիցների շահերը»: Նախագահը հիշեցրել է, որ ՀԱՊԿ անդամ մեր երեք դաշնակից պետությունները Հայաստանին չաջակցեցին անգամ այն հարցում, երբ այս տարվա հոկտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում Ադրբեջանը փորձում էր խոչընդոտել Հայաստանի մասնակցությանը` ՄԱԿ-ի տիեզերական տարածությունը խաղաղ նպատակներով օգտագործելու կոմիտեին: «Ուզում եմ շեշտել, որ մեր կազմակերպությունը արդյունավետ եւ ամբողջական գործունեություն կծավալի այն դեպքում, երբ հավատարիմ մնա Մինսկում ընդունված հայտարարությանը, որտեղ ամրագրված հիմնարար սկզբունքների համաձայն` ՀԱՊԿ շրջանակներում ռազմաքաղաքական համագործակցությունը կազմակերպության մեջ չմտնող երկրների հետ կապերի համեմատ ունի գերակա բնույթ: Ըստ որում, ես ցանկանում եմ ընդգծել, որ ղարաբաղյան կարգավորման հարցերում Հայաստանը միշտ դիմել է գործընկերներին միայն մեկ խնդրանքով` պահպանել չեզոքություն, աջակցել ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական ջանքերին, իսկ ընդունվող փաստաթղթերում ու հայտարարություններում կիրառել ԵԱՀԿ համատեղ հայտարարություններում առկա ձեւաչափերը», ասել է ՀՀ նախագահը:

## ՀԱՊԿ-ն սկսել է նախապատրաստվել խաղաղապահ գործողությունների

Այս մասին իր հերթին հայտարարել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը, ընդգծելով, թե «սուվերեն պետությունների ներքին գործերին միջամտելն անթույլատրելի է, քանի որ դա կարող է հանգեցնել ամենալուրջ հետեւանքների. դրամատիկ զարգացումները` Մերձավոր Արեւելքում, Հյուսիսային Աֆրիկայում այս ամենի ամենաակնհայտ ապացույցներն են»:

Երեկ երեկոյան նախատեսվում էր նաեւ Պուտին-Սարգսյան հանդիպումը, որին, ինչպես նաեւ ՀԱՊԿ գագաթնաժողովի այլ մանրամասներին դեռ կանդրադառնանք: Վերջում նշենք միայն, որ գագաթնաժողովի շրջանակներում ընդունվել է հայտարարություն, որտեղ, ՌԻԱ «Նովոստի»-ի փոխանցմամբ, մասնավորաբար ասվում է. «Առանց այլ երկրների շահերը հաշվի առնելու եւ վերջիններիս` իրավական տեսանկյունից պարտավորեցնող երաշխիքներ տրամադրելու, մեկ պետության կամ մի քանի պետությունների կողմից հայտարարում ենք, որ հակահրթիռային պաշտպանության ռազմավարական համակարգերի տեղակայումը կարող է վնաս հասցնել միջազգային անվտանգությանը, ինչպես նաեւ գլոբալ եւ տարածաշրջանային ռազմավարական կայունությանը», սա ակնհայտորեն` Թուրքիայում ՆԱՏՕ-ական «Փեթրիոթ» հակահրթիռային համակարգերի դեմ:

# «Օգնիր եղբորդ» նախաձեռնությունը կօժանդակի նաեւ Հայաստան այցելած սիրիահայ ընտանիքներին

«Անտարբեր լինելու իրավունք չունենք: Պահն է, երբ ողջ հայությունը պետք է ցույց տա իր միասնականությունը` օգնության ձեռք մեկնելով ինչպես սիրիահայ, այնպես էլ Սիրիայի կարիքավոր ընտանիքներին: Մեր եղբայրներին պատերազմի արհավիրքի դեմ մենակ չթողնելու կոչը լայն արձագանք գտավ: Մեր տասնյակ համաքաղաքացիներ, հայրենի մտավորականներ, քաղաքական գործիչներ եւ գործարարներ նյութական եւ բարոյական աջակցություն են ցուցաբերել «Օգնիր եղբորդ» նախաձեռնությանը», ասում է նախաձեռնության անդամներից **Լիլիթ Գալստյանը**:

Ամիսներ առաջ սկսված նախաձեռնությունն այսօր հպարտանալու հիմքեր ունի: Մինչ օրս նվիրաբերվել է 41 միլիոն 312.660 դրամ, 750.000 ռուսական ռուբլի եւ շուրջ 31 միլիոն 33210 դրամի պարենամթերք:

Նախաձեռնությունն այժմ էլ աջակցում է Հայաստանում հաստատված սիրիահայ ընտանիքներին: ԼՂՀ Քաշաթաղի շրջանում հաստատված 20 սիրիահայ ընտանիքների օգնելու եւ նրանց բնակարաններով օժանդակելու նպատակով նախաձեռնությունը 5 միլիոն դրամի փոխանցում է կատարել «Քաշաթաղ» հիմնադրամին: 230 հոգու տրամադրվել են մարզակոշիկ եւ հագուստ, 600 ընտանիքի 15 կգ-անոց պարենային արկղեր եւ 600 տաք ծածկոցներ:

ՀՅԴ խմբակցության պատգամավոր **Վահան Հովհաննիսյանը** ցավով փաստում է, որ Սիրիայում քաղաքացիական պատերազմը դեռ երկար կտեւի, հետեւաբար պետք չէ սահմանափակվել ձեռք բերածով:

Գործունեության ընթացքում մի քանի անգամ Հալեպ է ուղարկվել մարդասիրական օգնություն, տեղի Կարմիր մահիկի միջազգային կազմակերպությունը, Հայ առաքելական եկեղեցու Բերիո թեմի ազգային առաջնորդարանն ու համահամայնքային «Շտապ օգնության» հանձնախումբը կազմակերպել եւ օգնությունը բաժանել են կարիքավոր ընտանիքների, այդ թվում` սիրիացիներին:

Հ. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի

# «Տաքսու ղեկին հաճախ նստում են մարդիկ, որոնք վարորդական վկայական չունեն»

## *Արձանագրում է ճանապարհային ոստիկանության պետի տեղակալ Հայկ Սարգսյանը*

**2012 թվականի ընթացքում արձանագրվել է տաքսու վարորդների կողմից վարչական խախտման շուրջ 26 հազար դեպք, որոնք կազմում են ընդհանուր խախտումների գրեթե 7 տոկոսը: Այս մասին երեկ տեղի ունեցած ասուլիսի ժամանակ հայտնեց ճանապարհային ոստիկանության պետի տեղակալ, գնդապետ Հայկ Սարգսյանը: Նա նշեց, որ ճանապարհային ոստիկանությունը չի կարող վերահսկել բոլոր տաքսիներին, դրանց տեխնիկական վիճակը, հետեւել վարորդների կողմից ճանապարհային կանոնների կատարմանը: Հայկ Սարգսյանը հայտնեց, որ պաշտոնապես գրանցված է շուրջ 7,5 հազար մեքենա, իսկ շատերն էլ աշխատում են ստվերում:**

**Ըստ ճանապարհային ոստիկանության պետի տեղակալի, հաճախ տաքսու ղեկին նստում են մարդիկ, որոնք նույնիսկ չունեն վարորդական վկայական: Նրա կարծիքով, պետք է պատասխանատվության ենթարկել նաեւ տաքսի սերվիսներին, որպեսզի նրանք ավելի զգոն լինեն եւ թույլ չտան մեքենա վարել ոչ սթափ վիճակում գտնվողներին կամ երթուղի դուրս չբերեն տեխնիկական անսարքություններ ունեցող մեքենաների: Այդուհանդերձ, ոստիկանության գնդապետը նշեց, որ տաքսու վարորդների զգոնության հարցում բավականին մեծ առաջընթաց են արձանագրել տեսանկարահանող արագաչափ սարքերը:**

**Ձմեռային վթարների մասին Հայկ Սարգսյանն ասաց, որ դրանց ճնշող մասը տեղի է ունենում ամառային անվադողերի պատճառով: «Ճանապարհային ոստիկանությունը չի կարող հսկել, որ բոլորն անպայման անիվները փոխեն», նշեց նա:**

**Այն հարցին, թե որքանո՞վ են արդյունավետ հասարակական տրանսպորտի կանգառներում տաքսիների կայանման դեմ միջոցները, Հայկ Սարգսյանը նշեց, որ որոշակի դրական առաջընթաց կա, քանի որ վարորդները չեն ցանկանում 10 հազար դրամով տուգանվել: Սակայն, մյուս կողմից, նրանց հաջողվում է խուսափել պատասխանատվությունից, քանի որ որոշ փողոցներում հստակեցված չեն հասարակական տրանսպորտի կանգառների սահմանագծերը:**

Ա. Ս.




ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ

# Արեգակի ու Լուսնի խավարումները 2001-2050 թվերին





Հայկական աստղագիտական ընկերության (ՀԱԸ) կայքի «Իրադարձությունների օրացույց» (Calendar of Events) բաժնում տեղադրվել է 2001-2050 թվականների Արեգակի եւ Լուսնի խավարումների ամբողջական ցանկը: Հայկական աստղագիտական ընկերությունը ցանկը տեղադրելիս ժամանակաշրջանն ընտրել է այն սկզբունքով, որ ներառված լինեն ինչպես մոտիկ անցյալում տեղի ունեցած խավարումները, որոնք դեռեւս թարմ են մեր հիշողություններում, այնպես էլ առաջիկա տասնամյակներում սպասվող խավարումները, որոնք այսօրվա սերունդները դեռ տեսնելու են: Ցուցակներում գրված է Արեգակի 110 եւ Լուսնի 114 խավարումների մասին: Արեգակի խավարումներից 35-ը մասնակի են, 32-ը՝ լրիվ, 37-ը՝ օղակաձեւ, 6-ը՝ հիբրիդ:

ՀԱԸ-ն հայտնում է, որ տարեկան տեղի է ունենում Արեգակի միջինը 2-3 խավարում, որոնք կարճատեւ են ու հազվագյուտ երեւույթ աշխարհագրական տվյալ վայրի համար: Ցուցակում նշված խավարումներից միայն 11-ը կդիտվեն Հայաստանում, այն էլ միայն մասնակի փուլերում: Հայաստանում Արեգակի առաջիկա խավարումները կդիտվեն 2019, 2020 ու 2022 թվականներին:

Լուսնի խավարումների ցանկում էլ ընդգրկված է ինֆորմացիա 45 լրիվ, 27 մասնակի ու 42 կիսաստվերային խավարումների մասին: Ի տարբերություն արեգակնային խավարումների՝ Լուսնի խավարումներն ավելի երկար են տեւում՝ մինչեւ 3-4 ժամ ու տեսանելի են Երկրի բավականին մեծ տարածքից, հետեւաբար դրանց մեծ մասը կլինի տեսանելի նաեւ Հայաստանից:

Արեգակի ու Լուսնի խավարումների ցուցակները հանգամանորեն ներկայացված են **http://www.aras.am/Calendar/calendar.htm** ինտերնետային էջում:

Ի. Պ.

# Պարզաբանումներ հրապարակման վերաբերյալ

2012թ. դեկտեմբերի 17-ին մի շարք էլեկտրոնային լրատվամիջոցներով, մասնավորապես՝ Zham.am, Hetq.am եւ Lurer.com կայքերով, տարածվել է «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերությանը հանցագործության մեջ մեղադրող տեղեկատվություն, որի վերնագրում օգտագործվել է «հաղորդում հանցագործության մասին» արտահայտությունը:

Hetq.am ինտերնետային թերթով հրապարակումը ստորագրված է «Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնության» կողմից, որեւէ այլ՝ որոշակի անձի կողմից տեղեկատվությունը ստորագրված չէ: Հիմք ընդունելով, որ «Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնություն» անվանմամբ որեւէ իրավաբանական անձ Հայաստանի Հանրապետությունում գրանցված չէ, եւ որեւէ որոշակի ֆիզիկական անձի հետ այդ անվանումը միարժեքորեն չի նույնացվում՝ կարելի է եզրակացնել, որ հրապարակումներն իրավական կարգավիճակով ըստ էության չեն տարբերվում անանուն հայտարարություններից, եւ համապատասխան հաղորդման սուբյեկտ կարող են համարվել միայն տեղեկատվությունը տարածող լրատվամիջոցները:

Սույնով հայտնում ենք, որ վերը նշված հրապարակումներում ներկայացված մեղադրանքներն անհիմն են:

Մասնավորապես՝ հրապարակման առանցքը, մեր գնահատմամբ, հետեւյալ պնդումներն են. «ERM-ի իրականացրած վերագնահատման արդյունքներով բացահայտվել են ոչ միայն 2006 թվականին ՀՀ բնապահպանության նախարար Վարդան Այվազյանի կողմից հաստատված ՇՄԱԳ-ի փորձաքննական դրական եզրակացության մութ կողմերը, այլեւ պարզ է դարձել, որ ներկայումս հանքավայրը շահագործվում է միանգամայն նոր՝ 2010 թվականին կազմված նախագծով, որը մշակվել է միջազգային «Ստարսկոնա», «Միկրոմայն» եւ «Կավոշգարեն» խորհրդատվական կազմակերպությունների օգնությամբ: 2010թ. նախագիծը չի անցել օրենքով սահմանված ընթացակարգերը եւ չի ենթարկվել բնապահպանական փորձաքննության: Այլ կերպ ասած՝ Թեղուտի հանքավայրի շահագործումն իրականացվում է առանց փորձաքննության ենթարկվելու»:

**Իրականում.**

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերությունը, ինչպես նաեւ համապատասխան իրավունքները «Թեղուտ» ՓԲ ընկերությանը փոխանցելուց հետո՝ «Թեղուտ» ՓԲ ընկերությունը Թեղուտի լեռնահարստացուցիչ կոմբինատի կառուցման եւ պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի (այսուհետեւ՝ Ծրագիր) իրականացման ուղղությամբ աշխատանքներն իրականացնում են այն աշխատանքային նախագծով սահմանված կարգով, որն օրենսդրությամբ սահմանված կարգով անցել է բոլոր պահանջվող փորձաքննությունները: Միեւնույն ժամանակ, «Վալլեքս» խմբի ընկերությունները, Ծրագրի հիմքում ընկած աշխատանքային նախագծերի շարունակական կատարելագործման (առաջին հերթին՝ բնապահպանական անվտանգության բարելավման տեսանկյունից) նպատակով իրականացրել են հետազոտական աշխատանքներ՝ դրանց կատարմանը ներգրավելով նաեւ միջազգային չափանիշներով ոլորտի առաջատար մասնագիտացված կազմակերպություններին: Այդ աշխատանքների արդյունքում ստացված՝ հաստատված աշխատանքային նախագծի հնարավոր բարելավումների՝ տվյալ պահի դրությամբ ընդհանրացված մի փաթեթ, հաստատված աշխատանքային նախագծին զուգահեռ 2010 թ. ներկայացվել է ERM ընկերությանը՝ միջազգային ֆինանսական կորպորացիայի պահանջներին համապատասխանության տեսանկյունից փորձաքննություն իրականացնելու նպատակով: 2010 թվականին կազմված փաստաթուղթը, ըստ էության, հաստատված աշխատանքային նախագծի բարելավման ուղղությամբ շարունակական աշխատանքների ընթացիկ արդյունք է: Այդ փաստաթղթի վերջնական տարբերակում տեղ գտած՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության տեսանկյունից իրադրության փոփոխություն ենթադրող առանձին լուծումներ, որպես հաստատված աշխատանքային նախագծի լրացումներ, անշուշտ, օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում ներկայացվելու են համապատասխան պետական լիազոր մարմիններին: Այսօր արդեն կարող ենք արձանագրել, որ նման բոլոր լրացումներն ուղղված են բնապահպանական առումով ակնհայտորեն նախընտրելի լուծումների՝ օրենսդրորեն թույլատրելի շրջանակներում ամրագրմանը:

Վերոշարադրյալով սպառված համարելով «հանցագործության մասին հաղորդման» հիմնական բովանդակությունը՝ հարկ ենք համարում ավելացնել հետեւյալը.

«Վալլեքս» խմբի ընկերությունները ողջունում են իրենց գործունեության կառուցողական քննադատության փորձերը եւ պատրաստակամորեն քննարկում գործունեության բնապահպանական եւ այլ բնութագրերի բարելավման ներուժ ունեցող որեւէ առաջարկություն: Մենք կոչ ենք անում մեր հնարավոր ընդդիմախոսներին ցանկացած իրադրությունում դրսեւորել կառուցողական վարքագիծ: Մասնավորապես կարծում ենք, որ «Թեղուտի պաշտպանության նախաձեռնության» անունից գործող անձինք մեր գործունեությանն առնչվող, իրենց կարծիքով խնդրահարույց տեղեկատվություն հայտնաբերելով, առաջնահերթ՝ պարզաբանումներ ստանալու նպատակով պետք է դիմեին «Վալլեքս» խմբի համապատասխան ծառայությանը: Դա հնարավորություն կտար խուսափել անհիմն մեղադրանքներ հրապարակելուց կամ առնվազն զերծ մնալ այնպիսի թյուրըմբռնումներ դրանում զետեղելուց, ինչպես, օրինակ, առկա է հրապարակումից հետեւյալ մեջբերման մեջ.

2010 թվականի նախագծով փոփոխության են ենթարկվել բացահանքի տրամագծերը եւ խորությունը: Մասնավորապես, 2006 թվականի նախագծով բացահանքի խորությունը նախատեսված էր 432 մետր, մինչդեռ նոր՝ 2010 թվականի նախագծով բացահանքի խորությունը կազմելու է 890 մետր: ERM-ի գնահատման համաձայն, 890 մետր խորությունը ծովի մակարդակից ցածր է (հիմք է ընդունվել Բալթիկ ծովի մակարդակը): Այնուհանդերձ, հանքավայրի շահագործման նախագծում բացակայում են Բալթիկ ծովի մակարդակից ավելի խորը հորատում իրականացնելու համար անհրաժեշտ մեթոդների, ինչպես նաեւ հանքավայրի ընդլայնման համար պահանջվող լրացուցիչ հողային ռեսուրսների վերաբերյալ բավարար տվյալները եւ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը:

**Իրականում.**

Ինչպես աշխատանքային նախագծում, այնպես էլ՝ ERM-ի կողմից մշակված փաստաթղթում նույն մեծություններն են արտացոլված: Աշխատանքային նախագծում տրված են 890 մ բացարձակ բարձրության հորիզոնից բարձր գտնվող հանքաքարի շահագործման տեխնիկական պայմանները, ինչի դեպքում ձեւավորվելիք բացահանքի հատակի եւ եզրագծի ամենաբարձր կետի տարբերությունը, կամ, առօրեական լեզվով ձեւակերպած, բացահանքի ակնկալվող խորությունը, կազմում է մոտ 435 մ: Ծրագրի շրջանակներում 890 մ խորությամբ կամ բացասական բացարձակ բարձրությամբ հատակով բացահանք ունենալու մասին խոսք անգամ լինել չի կարող:

Օգտվելով առիթից, եւս մեկ անգամ հայտարարում ենք, որ «Վալլեքս» խմբի ընկերությունները պատշաճ կերպով արձագանքում են իրենց գործունեությանը, մասնավորապես՝ Ծրագրին վերաբերող որեւէ ԶԼՄ-ի ներկայացուցչի յուրաքանչյուր հարցադրմանը, ինչը, մեր համոզմամբ, լավ հնարավորություն է լրատվամիջոցների համար՝ բացառելու կամ նվազ հավանական դարձնելու Ծրագրին առնչվող միակողմանի եւ ոչ հավաստի տեղեկատվության հրապարակումը:

Հարգանքով՝

**«ՎԱԼԼԵՔՍ» խմբի ընկերությունների Տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին**

## Մեր հանդիպումները

# Արմաշ եպս. Նալպանտեանը սիրիահայութեան վիճակի մասին

## (Առաջնորդ Հայոց Դամասկոսի)

**- Այսօր ամբողջ աշխարհի հայութեան հայեացքը ուղղուած է Հայ սփիւռքի մայր գաղութին՝ Սուրիոյ հայութեան վրայ: Կ'ուզէի հակիրճ կերպով ներկայացնէիք վիճակը Ձեր թեմէն ներս:**

- Շատ դժուար է ներկայացնել մօտաւորապէս քսան ամիսներէ ի վեր շարունակուող հակամարտութիւններու իսկական պատկերը, որովհետեւ իսկապէս ալ դժուար է ճշդել՝ թէ ո՞ւր է հակամարտութեանց առանցքը: Թէ ի՞նչպէս սկսաւ եւ թէ ի՞նչ կը կատարուի եւ ի՞նչ պիտի պատահի՝ չեմ գիտեր ... այդ կը թողում քաղաքական մեկնաբաններուն եւ վերլուծաբաններուն: Հիմնականը, որ մեզ կը յուզէ, այս բոլոր հակամարտութիւններուն մէջ, անշուշտ սուրիահայութեան վիճակն է:

Շատ յստակ է, որ այս հակամարտութեան հիմքը կրօնական չէ, թէեւ ոմանք կը փորձեն անոր կրօնական զգեստ հագցնել: Այս հակամարտութիւնը ուղղուած չէ քրիստոնեաներու դէմ, եւ, հետեւաբար, ուղղուած չէ հայերու դէմ: Սակայն, այս կամ այն ձեւով, մենք ալ իրենց հետ, կը ցաւինք բոլոր անոնց հետ, որոնք հականարտութեան մէջ են: Սուրիոյ ցաւը մեր ցաւը դարձուցած ենք:

Մենք հակամարտութեան ոչ կողմ, ոչ ալ մաս կը կազմենք. բայց մենք եւս այդ նոյն դժուարութեան մէջ ենք: Այս քսան ամիսներու ընթացքին ունեցանք բաւական վնասներ: Մեր երեք եկեղեցիները վնասուած են. Հոմսի եկեղեցին բռնագրաւուած է, Հալէպի Ս. Գէորգ եկեղեցին ներսէն այրած են եւ Տէր Զօրի մեր Նահատակաց մատուռը սրբապղծած են: Ունինք վարժարաններ, մշակութային կեդրոններ, ազգային այլ շէնքեր եւս վնասուած:

Անոր հետ մէկտեղ, մեր գաղութի հոգեւոր եւ մշակութային կեանքը սառած է, որովհետեւ մեր միա՛կ մտահոգութիւնը եւ մեր աշխատանքի միա՛կ առանցքը դարձած է զգոյշ ըլլալ, արթուն ըլլալ, զուսպ ըլլալ եւ մեր բոլոր ուժերը դնել ժողովուրդին օգնութեան հասնելու ի խնդիր:

**- Սրբազան հայր, սուրիահայ գաղութը ունի երկու տարբեր թեմակալ առաջնորդութիւններ. Բերիոյ (Հալէպ) թեմը եւ Դամասկոսի թեմը: Ի՞նչպիսի փոխյարաբերութիւն կը տիրէ այս երկու թեմակալ առաջնորդներուն միջեւ տագնապի այս օրերուն: Այն օգնութիւնը որ պիտի գայ հայրենիքէն թէ սփիւռքէն, հասնելու է բովանդակ սուրիահայութեան:**

- Սուրիահայ գաղութը կազմուած է երկու թեմերէ՝ Հալէպի կամ Բերիոյ թեմը եւ Դամասկոսի թեմը: Ես այսօր առաջնորդն եմ Դամասկոսի հայոց թեմին եւ ինծի հետ գործակից ունիմ մեր սիրելի եղբայրը՝ Շահան եպս. Սարգիսեանը, որ առաջնորդն է Բերիոյ հայոց թեմին:

Մենք ունինք շատ մտերմիկ յարաբերութիւն եւ այդ զգալի եւ երեւելի է ժողովուրդին կողմէ եւ որ կ'ակնկալէ նման յարաբերութիւն: Ըսեմ նաեւ, որ ոչ թէ այսօր, այլեւ՝ անցեալին ալ ունեցած ենք սիրալիր յարաբերութիւն: Եւ, դժբախտաբար, այս ցաւը մեզ նաեւ մղեց աւելի սերտ համագործակցութեան. մեր այս ցաւին մէջ ալ մեր համագործակցութիւնը տիրական է:

Միասնաբար խորհրդակցելով մենք ստեղծեցինք Սուրիահայ շտապ օգնութեան մարմին մը իր մասնաճիւղերով, ըլլայ Դամասկոսի եւ ըլլայ Հալէպի մէջ, նկատի առնելով որ մեր առաջնորդական աթոռները այս երկու քաղաքներու մէջ հաստատուած են: Այս Շտապ օգնութեան մարմինը կը վայելէ բոլոր համայնքապետերուն՝ հայ առաքելական, կաթողիկէ թէ աւետարանական առաջնորդներուն հովանաւորութիւնը: Կը վայելէ նաեւ համագործակցութիւնը բոլոր մեր աւանդական կառոյցներուն: Հոն միա՛կ հիմնական աշխատանքն ու ծառայութիւնը այն է՝ համակարգել բոլոր օգնութիւնները, որոնք կը կատարուին, կը հանգանակուին աշխարհի չորս կողմերը՝ Հայաստանի թէ Սփիւռքի մէջ, ընդունելու եւ առաւել արդիւնաւէտ կերպով օգտագործելու զանոնք ժողովուրդին օգնութեան համար:

Այս բոլոր հանգանակութիւնները, որոնք կը կատարուին, մեր պարագային՝ նուիրապետական զոյգ աթոռներու՝ Մայր աթոռի թէ Կիլիկիոյ աթոռին միջոցաւ հաւաքուած դրամը մէկտեղ կը հաւաքուին եւ պարբերաբար կը տրամադրուին այդ մարմնին:

**- Հայ համայնքի դէմ մեղադրանքներ կա՞ն հայութեան դրական չէզոքութեան քաղաքականութեան պատճառով:**

- Մենք որեւէ մեղադրանքի համար պատասխանատու չենք, հաշուետու չենք: Մենք ներկայ պայմաններէն ելլելով, մեր դիրքը որոշած ենք: Մեր ներկայ կեցուածքը հետեւեալն է. մենք մեզ կը նկատենք Սուրիոյ ժողովուրդին կարեւոր եւ անբաժանելի մէկ



մասնիկը: Ուստի, մենք Սուրիոյ հետ ենք: Այսինքն՝ երբ մեր սիրելի երկիրը վտանգի մէջ է, իսկապէս ցաւի մէջ է, մենք եւս կը ցաւինք:

Անոր հետ մէկտեղ, իսկապէս մեզի համար դժուար է լսել մեղադրանքներ, թէ մենք որդեգրած ենք չէզոք դիրք: Միայն կ'ուզեմ մէկ բան յստակ ըլլայ. մենք շատ յստակ տարբերութիւն կը դնենք վախի եւ զգուշութեան միջեւ: Մենք շատ զգոյշ ենք, շատ զուսպ ենք, շատ գիտակից ենք կատարուածին, ամէնօրեայ խնդիրներուն եւ ըստ այնմ ալ կը գործենք: Սակայն մենք երբեք չենք վախնար, չնայած այսօրուան դէպքերն ու առօրեայ պատումները, որոնք իսկապէս վախ կը թելադրեն: Բայց ոչ, մենք կարողացանք մեր ժողովուրդին մէջ այդ քարոզել եւ սերմանել, թէ մենք չենք վախնար, այլ մենք զգոյշ ենք ու զուսպ: Ու ասկէ ալ արդէն կը բխի մեր կեցուածքը:

**- Մեր հայրենիքը՝ եղաւ առաջինը, որ իր օգնութեան ձեռքը երկարեց Սուրիոյ մեր հայութեան:**

- Իսկապէս, մեր պատմութեան մէջ, եւ մանաւանդ արդի պատմութեան մէջ, առաջին անգամն է որ այսպէս կը դրսեւորուի Հայաստանի Հանրապետութեան ուժն ու հզօրութիւնը: Դժբախտաբար, այս պարագային եղաւ սուրիահայութեան այս ցաւին ժամանակ: Բայց մենք այդ հզօրութիւնը կը զգանք գործնական ձեւով եւ ոչ թէ երազային, ոչ թէ տեսական, այլ՝ իրական:

Կան տարբեր օրինակներ. ինչպէս դուք ըսիք, կոչը յայտարարուեցաւ, օգնութիւններ եղան, նաեւ ՀՀ պետութիւնը գրկաբաց ընդունեց իւրաքանչիւր սուրիահայու: Վերջապէս Հայաստան իր գիրկը բացաւ իր ժողովուրդին: Այսօր Հայաստանի մէջ ժամանակաւոր կամ երկար ժամկէտով հաստատութիւն կազմած մեր հայորդիները կը վայելեն պետութեան աջակցութիւնը, տուրքերէ ազատած վիճակով, ընկերային եւ հասարակական ծառայութիւններով:

Անոր կողքին, սուրիահայութեան խնդրանքին ընդառաջ, Երեւանի մէջ սուրիական եւ արաբական ուսումնական ծրագրով դպրոց ունենալու համար կառավարութիւնը տրամադրեց Նար Դոսի անուան դպրոցը, որ Հալէպի Կիլիկեան վարժարանի ջանքերով, առաւելաբար, հաստատուեցաւ:

Հայաստանի Հանրապետութիւնը նաեւ տարբեր մակարդակներու վրայ իր օժանդակութիւնը կը բերէ: Քաղաքական գետնի վրայ, բոլորը գիտեն թէ Սուրիա այս ճգնաժամին պատճառով կը գտնուի պատժամիջոցներու տակ եւ մանաւանդ Արեւմուտքի եւ արաբական բոլոր երկիրներու դեսպանատուները գոցեցին իրենց ներկայացչութիւնները Սուրիոյ մէջ եւ հեռացան: Սակայն ՀՀ-ն իր դեսպանութիւնը բաց կը պահէ եւ պիտի շարունակէ պահել: Ասիկա շատ յստակ է մէկ պատճառով՝ ուղղակի թիկունք կանգնելու տեղւոյն սուրիահայութեան:

Անոր կողքին, այն ալ ըսեմ որ, անցեալ ամիսներուն, ՄԱԿի համաժողովին, ՀՀ արտաքին գործոց նախարարը իր ելոյթի ժամանակ հանդէս եկաւ Հայաստանին յուզող տարբեր հարցերը ներկայացնելով եւ ի շարս այլ հարցերու, նաեւ բարձրացուց Սուրիոյ հայութեան վիճակը: Ասիկա մեզի համար, միջազգային գետնի վրայ, բարձրացուած մե՛ր քաղաքական ձայնն էր, թէ Հայաստանը թիկունք է սուրիահայութեան:

**- Յուսախաբութեան նշոյլներ կա՞ն արդեօք սուրիահայ գաղութին մէջ, կազմակերպութիւններու թէ անհատներու մօտ դասալքութիւն կը տիրէ՞, մանաւանդ երիտասարդներու մօտ:**

- Մենք կը քարոզենք ու կը խօսինք թէ՛ երիտասարդին եւ թէ՛ տարէցին: Այս իրականութիւնը եւ այս գիտակցութիւնը կայ եւ կը մնայ ..., որովհետեւ մենք մեզ կը զգանք իբրեւ պաշտպանները այն հարստութիւններուն եւ սրբութիւններուն, որոնք ստեղծած ենք այս երկրին մէջ: Մենք մեզ կը զգանք պահապանները մեր նահատակներու աճիւններուն եւ նշխարներուն, որոնք այստեղ են:

Մենք ալ Սուրիոյ տուած ենք շատ բան: Մենք Սուրիոյ տուած ենք իւրայատկութիւն մը, այսինքն՝ Սուրիան այսօր հարստացած է, եւ այդպէս է իրականութիւնը, իր գունագեղ հասարակութեամբ, ծաղկեփունջի մը պէս: Մենք իսկապէս հպարտ ենք այդ ծաղկեփունջի մէջ դառնալու բուրումնաւէտ վարդերէն մէկը:

Այդպէս ալ, մեր աշխատանքով, մեր նուիրումով, մեր շինարար բնաւորութեամբ եւ մեր արարումներով հպարտ ենք: Այս գիտակցութեամբ է որ մենք կը փորձենք սկսուած գործը շարունակել, զայն համարելով մեր պապերուն հրամայականը, զայն համարելով սփիւռքի միւս գաղութներուն հրամայականը. տէ՛ր ըլլալու մեր ունեցած հարստութիւններուն եւ սրբութիւններուն:

Այսօր վիճակը ցաւոտ է: Մենք կը ցաւինք իսկապէս, երբ մեր երկրին բնակիչներուն առջեւ կը դրուի «մահու ու կենաց»ի խնդիր: Հետեւաբար աշխարհատարած հայկական օգնութիւնները, որոնք կը կատարուին, թող բոլորը վստահ ըլլան, կը հասնին իրենց նպատակին, տէր ըլլալով այս հայաբոյր մայր գաղութին:

**- Եթէ սուրիահայութեան գաղթը շարունակուի, ի՞նչ կորուստներ ունեցած պիտի ըլլանք:**

- Այն ինչ որ թուեցի. ամբողջ մեր հարստութիւնները՝ վարժարանները, միութիւնները, ազգային մեր միւս կառոյցները: Գաղութին այդ հայաշունչ ոգին, արեւմտահայերէնը, մեր մամուլը, մեր թատրոնը, մեր եկեղեցին, մեր նահատակներու աճիւնները, եւ այսպէս՝ շարունակ:

Սփիւռքի մեր այս արժէքաւոր գաղութը սովորական գաղթօջախ մը չէ: Սուրիահայութիւնը միայն համայնք մը չէ, այլեւ ամբողջական «Հայ մարդ» արտադրող համայնք մըն է: Այսինքն, ոչ թէ մենք միայն մեր կրօնական արարողութիւնները եւ մշակութային ձեռնարկները կը կազմակերպենք, այլեւ անոնց միջոցաւ նոր սերունդ կը պատրաստենք: Այդ բոլոր պայմանները տրուած են մեզի մեր արաբ հիւրընկալ ժողովուրդին կողմէ: Այդ պայմանները ստեղծած ենք մեր յամառ ջանքերով, մեր դպրոցներուն թէ հաստատութիւններուն մէջ:

Ամենամեծ կորուստը պիտի ըլլայ «Հայ մարդ» կերտող կառոյցին յանձնումը պատմութեան:

Բայց, ինչպէս ըսի՝ «Աստուած չընէ:» Մենք վստահ ենք ու մեր ամէն ջանքը, աշխատանքը, մեր ծառայութիւնը պիտի տանինք հո՛ն, որպէսզի չկորսնցնենք: Այս դէպքը միայն սուրիահայութեան գերխնդիրը պէտք չէ մնայ:

Սուրիահայութիւնը սփիւռքի մէջ գործող եւ գոյատեւած ամենէն օրինակելի գաղութն է, նաեւ այն իմաստով, որ մենք հայրենի բնութեան մէկ մասն ենք, հայելին մեր մշակոյթին ու ժառանգութեանց:

Սուրիոյ մէջ, մեր դրացի ժողովուրդը Հայաստանը կը ճանչնայ մեզի նայելով, մեզ տեսնելով: Եւ ուրեմն մենք ենք հայելին:

Իսկապէս ես հպարտ եմ սուրիահայ ըլլալուս, այս առումով:

**- Ունի՞ք դիտարկումներ այս հակամարտութեանց եւ անոնց ապագայ ընթացքին մասին:**

- Դիտարկումները, ինչպէս ըսի, ես կը թողում բոլոր քաղաքական մեկնաբաններուն, վերլուծաբաններուն եւ պատմաբաններուն: Իմ մտահոգութիւնս այս ամբողջ ճգնաժամին մէջ մեր ժողովուրդին ապագան է: Կը մաղթեմ միայն, որ այս հակամարտութիւնը շուտ աւարտի: Այս բռնութիւնը շուտ աւարտի, որովհետեւ որքան երկարի, այնքան մեր գաղութին ուժէն է որ կ'երթայ:

Այո, մեր ժողովուրդը զօրաւոր է, ինչպէս ըսի՝ մենք չենք վախնար:

**- Լիբանանի տագնապը տեւեց մօտ քսանամեակ մը, անշուշտ մեր ալ մաղթանքն է որ Սուրիոյ տագնապը շուտով գտնէ իր լուծումը: Անհատներ, ազգային մեր բարերարներէն ոմանք եթէ ուզեն սուրիահայութեան օգտակար ըլլալ, իրենց նուէրները առանց մեր աւանդական կառոյցներուն ղրկելու ո՞ւր կը թելադրէք որ ղրկեն:**

- Ապահովութեան նկատումներով, ամենայարմարն է դիմել նուիրապետական մեր աթոռներուն, թեմական մարմիններուն եւ ազգային կառոյցներուն: Ստեղծած ենք Սուրիահայ շտապ օգնութեան մարմիններ, որոնք կը համախմբեն այդ օգնութիւնները եւ իրենց միջոցներով կը բաշխեն:

Միւս կողմէ, նախկին սուրիահայեր, որոնք կ'ուզեն իրենց հարազատներուն համար կատարել նիւթական օժանդակութիւն, ունին նաեւ այդ կարելիութիւնը:

**- Նախքան Նիւ Եորք Ձեր այցը, գտնուեցաք նաեւ Կալիֆորնիա եւ Կանադա: Ի՞նչպէս կը գնահատէք մեր այդ գաղութներուն մասնակցութիւնը եւ վերաբերմունքը սուրիահայ գաղութին օգտակար ըլլալու:**

- Վերաբերմունքը տպաւորիչ եւ շինիչ էր: Արեւելքէն եկած ամերիկահայերու մօտ որոշակի կապ մը կը շարունակուի մնալ: Ըսեմ նաեւ, թէ արաբական երկիրներէն հայեր եւս կը ցուցաբերեն իրենց հետաքրքրութիւնը սուրիահայութեան ճակատագրով: Կը զգամ, որ կայ գիտակցութիւնը, թէ սուրիահայ մեր գաղութը իսկապէս կարեւոր է եւ անոր ճգնաժամը՝ ճակատագրական բոլորիս համար:

Զգացած եմ այն համատարած պատրաստակամութիւնը եւ օժանդակութիւնը, որ կը կատարուի տարբեր գաղութներու մէջ:

Այս ճամբորդութիւնս կը կատարեմ նաեւ յանուն իմ եղբօր՝ Շահան եպս. Սարգիսեանի՝ Բերիոյ հայոց թեմի առաջնորդին: Միասնաբար, մեր կոչերով կը յորդորենք հայութիւնը սուրիահայութեան օգտակար դառնալու:

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ

Փէյր Լոն, Նիւ Ճըրզի

# «Նորին գերազանցություն»` Կովկասի խելագար

Խոսքը Իլհամ Ալիեւի մասին է: Եվ` ոչ չափազանցված, ոչ` քաղաքականացված: Հայտնի խոսք է` «ոճը մարդն է»: Այսինքն` խոսքով է դատվում, թե մարդ ով է: Այս իմաստով խիստ բնութագրական էր Իլհամ Ալիեւի ելույթը Ադրբեջանի ազգային օլիմպիական կոմիտեում:

Իր խոսքում նա անդրադարձել է Ադրբեջանի տնտեսական խնդիրներին եւ խոստովանել, որ նավթարդյունահանության ոլորտում «որոշակի անկում է եղել»: Ի՞նչ կա որ, տնտեսության այս կամ այն ոլորտի խնդիր ունենում է ամեն մի երկիր: Բայց` ոչ «նորին գերազանցություն» շիզոֆրենիկի ընկալմամբ: Անդրադառնալով BP ընկերության հասցեին իր «դիտողություններին», Իլհամ Ալիեւը ենթադրել է, որ դրանից հետո «Ադրբեջանին չսիրողները, արտաքին ուժերը, հայկական լոբբին եւ, ցավոք, նրանց հետ նույն ճամբարում գտնվող ներքին (կարծես թե արտաքին էլ է լինում- Վ. Ա.) ընդդիմությունը փորձեցին չափազանց սրել այդ հարցը` իբր թե Ադրբեջանի, Պետական նավթային ընկերության (Ադրբեջանի) եւ նրա գործընկերների միջեւ ինչ-որ խնդիրներ կան»:

Ի՞նչ կապ ունեն այստեղ «Ադրբեջանին չսիրողները, արտաքին ուժերը, հայկական լոբբին եւ նրանց հետ նույն ճամբարում գտնվող ներքին ընդդիմությունը», եթե Ադրբեջանի պետական նավթային ընկերության նախագահ Ռովնագ Աբդուլլաեւն անձամբ էր հայտարարել, որ «BP-ի փոխարեն հարկ կլինի գտնել այլ օպերատոր, եթե նավթի արդյունահանման ծավալները չվերականգնվեն»: Սա չի՞ նշանակում, որ Ադրբեջանի կառավարությունը BP-ի հետ ունի տարաձայնություններ:

Գումարած, որ բրիտանական եւ համաշխարհային մամուլը նույնպես հեղեղված է վերլուծություններով, որ մի կողմից քննադատում են Ադրբեջանի բռնապետությունը, մյուս կողմից` այդ երկրի համար կանխատեսում, մեղմ ասած, ոչ այնքան «պայծառ հեռանկար»: Եվ այստեղ «հրճվելու» կամ «ապոկալիպսիս գուշակելու» խնդիր չկա: Մանավանդ` հայկական կողմի համար: Խնդիրը խորքային է, ինչին կարծես Իլհամ Ալիեւի ինտելեկտը հասու չէ. Ադրբեջանը «նստած է նավթային ասեղի վրա», եւ կոնյունկտուրայի թեկուզ աննշան փոփոխությունը կարող է պսակազերծել «խոշոր քայլերով առաջընթացի» առասպելը:

Դա է թերեւս շարժառիթը, որ Իլհամ Ալիեւը բառացիորեն փրփուրներից է կառչում. «... Ուզում եմ ասել, որ թող չուրախանան մեզ չսիրող ուժերը, դավաճանները (սա վերաբերում է ադրբեջանական ընդդիմությանը- Վ. Ա.), այն մարդիկ, որոնք ուրախանում էին, երբ Լոնդոնի ամառային օլիմպիադայի առաջին օրերին մեր մարզիկները չէին կարողանում ոսկե մեդալներ նվաճել: Այդ մարդիկ հետո հայկական լոբբիի հետ միասին հիասթափված էին խաղերի (օլիմպիական) արդյունքներով: Թող չհրճվի հայկական լոբբին, չհրճվեն արտաքին ուժերը (ներքին ընդդիմությանն ինչո՞ւ է անտեսում- Վ. Ա.), որոնք մեզ չեն սիրում եւ չեն ընդունում Ադրբեջանի հաջող զարգացումը», եզրափակել է Իլհամ Ալիեւը:

Տրվե՞լ գայթակղությանը, գնա՞լ դիտարկումների, համադրությունների, վերլուծությունների եւ եզրահանգումների: Ըստ երեւույթին իմաստ չունի: Երբ մի երկրի նախագահի պաշտոնն զբաղեցնող անձը պաշտոնական միջոցառման ելույթը կառուցում է ամենաշարքային «Հասանի ընկալումների», իրականում` բնազդային «նախասիրությունների» եւ ատելության նկատառմամբ, այստեղ արդեն չեն օգնի ոչ քաղաքագիտական վերլուծությունները, ոչ սոցիոլոգիական հարցումները, ոչ դասականներից արված մեջբերումները, ոչ էլ նույնիսկ հղումը «համազգային առաջնորդ» Հեյդար Ալիեւի «դարակազմիկ ասույթներին»:

Պարզապես հարկ է արձանագրել, որ եւ ադրբեջանական ժողովուրդը, եւ մենք գործ ունենք մի «ֆենոմենալ» երեւույթի հետ` երբ պետության ղեկավարը սկսում է «դատողություններ անել»... բակային տղայավեճի մակարդակով: Այ, սա ողբերգություն է: Ամենից առաջ` ադրբեջանական ժողովրդի եւ հասարակության համար: Հետո` մեզ: Թե ինչպե՞ս կարելի է պետական, միջպետական, միջազգային հարաբերությունները իջեցնել «լավ-վատ տղայի մակարդակի»` դասական օրինակը տալիս է Իլհամ Ալիեւը:

Պատահականությո՞ւն է սա, թե՞ «օրինաչափություն»: Հավանաբար` երկրորդը. գործնականում «այս աշխարհի ուժեղներին» ձեռնտու է նավթով եւ գազով հարուստ տարածքում, որը միջազգային հարաբերությունների կոնյունկտուրայի բերումով կնքվել է Ադրբեջան եւ «օժտվել սուվերենությամբ», ունենալ շիզոֆրենիայով տառապող կառավարիչ: «Թող նա լուռ պահի հպատակներին, թող երբեմն հոխորտա»,- դրանից BP-ի եկամուտները չեն տուժում: Ոչ ոք չի տուժում: Առայժմ:

Վ. Ա.

# Անտարկտիդայի մի մասն անվանակոչվեց ի պատիվ Էլիզաբեթ Բ-ի



Անտարկտիդայի մի մասը Էլիզաբեթ Բ թագուհու անունն է ստացել նրա գահակալության 60-ամյակի առթիվ: Այդ մասին հաղորդում է «Թելեգրաֆ» թերթը:

«Էլիզաբեթ թագուհու երկիր» անվանակոչված տարածքն ունի 437 հազար քառ. կմ մակերես, որը կրկնակի գերազանցում է Մեծ Բրիտանիայի մակերեսը: Այդ տարածքն անցյալում անուն չուներ:

Թագուհու նոր «տիրույթները» ներկայացրել է Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ուիլյամ Հեյգը: «The Independent» թերթը տեղեկացնում է, որ ավելի վաղ` դեկտեմբերի 18-ին թագուհին առաջին անգամ ներկա էր գտնվել կառավարության նիստին: Մեծ Բրիտանիայի պատմության մեջ վերջին անգամ նման հնարավորությունից օգտվել էր Վիկտորիա թագուհին, որը վախճանվեց 1901-ին:

# ՄԱԿ-ը Պակիստանում դադարեցրեց պատվաստումները սպանությունների պատճառով

Պակիստանում վերջին օրերին մի շարք հարձակումներ են կատարվել պոլիոմելիտի դեմ պատվաստումներ իրականացնող կազմակերպությունների` ՅՈՒՆԻՍԵՖ-ի եւ Առողջապահության համաշխարհային կազմակերպության աշխատակիցների վրա: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ երեկ այդ կազմակերպությունները ստիպված դադարեցրել են այդ վտանգավոր հիվանդության դեմ ուղղված պատվաստումները:

Երեկ Պակիստանում սպանվել են պոլիոմելիտի դեմ պայքարող 3 անձինք: Մի անհայտ մոտոցիկլավար Չարսադդա քաղաքում գնդակահարել է մի կնոջ եւ նրա վարորդին: Փեշավարում վիրավորված մի տղամարդ մահացել է հիվանդանոցում: Նաուշերի շրջանում գնդակոծվել են չորս կանայք:

ՄԱԿ-ի աջակցությամբ Պակիստանում դեկտեմբերի 17-19 պետք է իրականացվեր 5,2 մլն պատվաստում, բայց այդ օրերին սպանվեցին 9 անձինք, այդ թվում` 6 կանայք:

Արմատական իսլամիստները դեմ են պատվաստումներին, պնդելով, թե դրանք անցկացվում են Արեւմուտքի նախաձեռնությամբ` կամ երկրի բնակչությանն ամլացնելու, կամ էլ մարդկանց նկատմամբ հսկողություն հաստատելու նպատակով:

ՀԱԿԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

# Մուհամմեդին նվիրված ֆիլմաշարը կարժենա 1 մլրդ դոլար

**Մուհամմեդ մարգարեին նվիրված ֆիլմաշարի բյուջեն կկազմի 1 մլրդ դոլար: Այդ մասին Ֆրանսպրեսի թղթակցին հայտնել է նախագծով զբաղվող քաթարյան «Ալնուր հոլդինգ» ընկերությունը:**

**Ֆիլմաշարը բաղկացած կլինի 7 լիամետրաժ ֆիլմից. սկզբում նախատեսված էր նկարահանել ընդամենը 3 ժապավեն: Ֆիլմերը կնկարահանվեն անգլերեն, իսկ հետո կթարգմանվեն մի շարք լեզուներով, «որպեսզի շտկեն Արեւմուտքում իսլամի վերաբերյալ ստեղծված թյուր պատկերացումը»:**

**Մի խումբ փորձագետներ, որոնց մեջ է ամենաազդեցիկ սուննի իմամներից մեկը` Յուսուֆ ալ Կարադավին, արդեն ավարտել է աշխատանքը ապագա ֆիլմաշարի սցենարի վրա, հայտարարել են «Ալնուր հոլդինգի» ներկայացուցիչները, չնշելով, թե երբ են սկսվելու նկարահանումները:**

**«Ալնուր հոլդինգը» 2009-ին առաջին անգամ հրապարակել էր Մուհամմեդ մարգարեի մասին ֆիլմաշար նկարահանելու իր մտադրությունը: Այն ժամանակ հայտարարել էր, որ պրոդյուսերն է Բարրի Օսբորնը, որը մասնավորապես աշխատել է «Մատանիների տիրակալի» եւ «Մատրիցայի» վրա: Ֆիլմաշարում նախատեսվում է ներգրավել հանրահայտ, այդ թվում հոլիվուդյան դերասաններ: Նախապես ծրագրված էր ֆիլմաշարի վրա ծախսել ընդամենը 150 մլն դոլար:**

**Սցենարի մանրամասնությունները չեն հրապարակվում: Հաստատ հայտնի է միայն, որ ֆիլմում Մուհամմեդը ոչ մի անգամ չի երեւում, քանի որ իսլամն արգելում է պատկերել նրան:**

**2012-ի սեպտեմբերին համացանցում հայտնվել էր Մուհամմեդին ծանակող «Մուսուլմանների անմեղությունը» էժանագին ֆիլմը, որի պրոդյուսերը ԱՄՆ-ում ապրող մի եգիպտացի է: Ֆիլմը իսլամական աշխարհում բողոքների ալիք էր բարձրացրել, իսկ Եգիպտոսում դրա հեղինակները հեռակա կարգով դատապարտվել էին մահապատժի:**

# Իրաքի նախագահը կոմայի մեջ է



**Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանին ինսուլտ է անցկացրել եւ այժմ կոմայի մեջ է: Իրաքյան պաշտոնական աղբյուրների տեղեկությունների համաձայն, պետության ղեկավարի վիճակը կայուն ծանր է:**

**Հաղորդվում է, որ քաջառողջությամբ աչքի չընկնող Թալաբանին իրեն վատ է զգացել Իրաքի ղեկավարության եւ ինքնավար Քրդստանի ղեկավարության երկարատեւ եւ անարդյունք բանակցություններից հետո, որոնց ընթացքում նա հանդես էր գալիս իբրեւ միջնորդ:**

**Ջալալ Թալաբանին ծնվել է 1933 թվականին Թալաբան գյուղում: 1950-ականներին հարել է Մուստաֆա Բարզանիի քրդական քաղաքական շարժմանը եւ ակտիվորեն մասնակցել քրդերի անկախության պայքարին: Ավելի ուշ հիմնել է իր կուսակցությունը` «Քրդստանի հայրենասիրական միությունը»:**

**Պարսից ծոցի առաջին պատերազմից հետո մասնակցել է Իրաքի հյուսիսում Քրդստանի շրջանային կառավարության ստեղծմանը: Մասուդ Բարզանիի եւ ուրիշ քուրդ առաջնորդների հետ 2003-ին հավանություն է տվել օտարերկրյա զորքերի ներխուժմանը:**

**2005-ին Իրաքի խորհրդարանը Թալաբանիին ընտրեց երկրի նախագահ: Մեկ տարի անց նա վերընտրվեց ըստ նոր սահմանադրության, որն ապահովում է Իրաքի դաշնային կառուցվածքը: Թալաբանին նաեւ ոչ արաբ փոքրամասնության առաջին ներկայացուցիչն է երկրի նախագահի պաշտոնում:**

# Ինչո՞ւ սիրիահայերը չպաշտպանեն նախագահ Ասադի վարչակարգին

*1-ին էջից*

**Այլ կերպ, Ասադի վարչակարգը համայնքի պահպանման գրավականն է սիրիահայերի համար: Այդ իսկ պատճառով էլ նրանք ի սկզբանե սատար են կանգնել նախագահ Բաշար Ասադին, եւ ընդդիմությանը երկար ժամանակ չի հաջողվել ներթափանցել զգալիորեն հայերով բնակեցված Հալեպ: Վերջին շրջանում միայն Հալեպը ականատես եղավ ավերիչ եւ արյունահեղ կռիվների, եւ դրանք տարածվեցին նույնիսկ քաղաքի հայկական թաղամասեր:**

**«Ազատ Սիրիայի բանակի» վարձկանների եւ կառավարական զորքերի կռիվները դիտվում են որպես անվտանգության սպառնալիք ազգային փոքրամասնությունների, առավել եւս Սիրիայի հայերի համար: Հատկապես այն դեպքում, երբ սիրիահայերը ցեղասպանության զոհերի անմիջական ժառանգներն են, ուստի միանգամայն տրամաբանական է, որ անվտանգության հարցերում առավելագույն զգոնությունը հենց նրանք դրսեւորեն եւ Ասադի վարչակարգին համարեն անվտանգ գոյության գլխավոր պատվարը:**

**Կռիվների ձգձգումը չի փոխել նախագահ Ասադի նկատմամբ սիրիահայերի բարեհաճ վերաբերմունքը, սակայն խիստ անհանգստացրել է նրանց: Անհանգստության պատճառները բազմազան են: Դրանցից թերեւս կարելի է առանձնացնել սիրիական ընդդիմության մասնատվածությունը, որը հնարավորություն չի տալիս կռահելու, թե ինչ ուժեր կգան իշխանության: Այս հանգամանքը միանգամայն անկանխատեսելի է դարձնում ազգային փոքրամասնությունների, եւ հատկապես հայ համայնքի նկատմամբ ապագա իշխանությունների դիրքորոշումը: Մանավանդ որ ընդդիմության շարքերում կան երկրում ավելի արմատական քայլեր իրականացնելու կողմնակից ուժեր: Որքան էլ Սիրիայի ազգային խորհուրդն ու «Ազատ Սիրիայի բանակը» հայտարարեն, թե երկրի քրիստոնյա բնակչության նկատմամբ որեւէ ատելություն չեն տածում, դա այնուամենայնիվ բռնության հետագա սաստկացում է ենթադրում, իսկ բռնությունից առաջին հերթին, որպես կանոն, տուժում են ազգային փոքրամասնությունները:**

**Թվում է, թե սիրիահայերի համար առավել մտահոգիչը սիրիական ընդդիմությանը Թուրքիայի անվերապահ աջակցությունն է: Հատկապես հայերի եւ Հայաստանի նկատմամբ թուրքական պետության թշնամական դիրքորոշման, ինչպես նաեւ Սիրիայի հայկական համայնքը կազմալուծելու նկրտումների ֆոնին: Խնդիրը, սակայն սոսկ Թուրքիայի հակահայկական դիրքորոշումը կամ համայնքի գոյությանը սպառնացող նկրտումները չեն, այլ իշխանափոխության դեպքում Սիրիայում նոր իշխանությունների` Թուրքիայի միջամտությամբ ձեւավորման հավանականությունը, ինչը ամենամռայլ հեռանկարը կլինի սիրիահայության ճակատագրի առումով:**

# Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը իր 75-ամյակը նշեց փառահեղ համերգով

Կան համերգային կոլեկտիվներ եւ անհատներ, որոնց անունն իսկ անհնար է արտասանել՝ առանց խորին ակնածանքի, պատկառանքի ու հպարտության: Այդպիսի համերգային կոլեկտիվ է Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը՝ հռչակավոր Կապելլան, եւ այդպիսի անհատ է նրա երկարամյա (ավելի քան 51 տարի) գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր, աշխարհահռչակ երաժիշտ, «Ամենայն հայոց մաեստրո» Հովհաննես Չեքիջյանը:



Այս տարի լրանում է Կապելլայի «ծննդյան» 75-ամյակը, ինչի առիթով, առաջինը հանրապետության երաժշտական կոլեկտիվների մեջ, երգչախմբին կառավարության որոշմամբ շնորհվել է «Ազգային կոլեկտիվ» պատվավոր տիտղոսը, ինչն այսօրվա սանդղակով բարձրագույն կարգավիճակն է որեւէ երաժշտական խմբի համար: Այնպես որ՝ Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբ հպարտ անվանաշարին այսուհետեւ ավելանում է «Ազգային» խրոխտ մակդիրը, որն արդեն իսկ «ներկա» էր Կապելլայի 75-ամյակին նվիրված՝ դեկտեմբերի 17-ի համերգը ծանուցող ազդագրերի եւ հրավիրատոմսերի վրա:

Արամ Խաչատրյան համերգասրահում հավաքված դասական երգարվեստի սիրահարները ներկա եղան երգի իսկական հրավառության, որ երեկոյի ընթացքում մատուցեց մաեստրո Չեքիջյանը Կապելլայի, Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի եւ մենակատարների հետ:

Համերգին նախորդած հանդիսավոր մասում ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, որ Մշակույթի նախարարության Ոսկե մեդալով պարգեւատրեց Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբին 75-ամյակի առթիվ: Այնուհետեւ Հ. Պողոսյանը ընթերցեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի շնորհավորական ուղերձը եւ ջերմ բարեմաղթանքները մաեստրո Հովհաննես Չեքիջյանին եւ նրա ղեկավարած Կապելլային՝ հոբելյանի առթիվ:

Կապելլայի անցած փառահեղ ուղու եւ մաեստրոյի մասին իր վառ հիշողություններով «կիսվեց» երգչախմբի ամենահնաբնակը՝ մաեստրո Չեքիջյանի Կապելլա նորամուտի միակ կենդանի վկան՝ ՀՀ ժողովրդական արտիստ Ալբերտ Խաչատրյանը:

Ինչ վերաբերում է հոբելյանական համերգի ծրագրին, քիչ է ասել՝ հետաքրքրական էր. այն, առանց չափազանցության, պարզապես անթերի էր թե՛ ընտրված գործերի, թե՛ դինամիկայի առումով, ինչի շնորհիվ շուրջ 1,5 ժամ ունկնդիրը հաճելի լարվածություն ապրեց:

Առաջին բաժնում հնչեցին ակապելլա եւ դաշնամուրի նվագակցությամբ ստեղծագործություններ՝ Կոմիտասի, Կարա-Մուրզա, Տիգրանյան, Ռոսինի, Դեվիս, Բըրլի, Պոլետի, Չուխաջյան... Ի դեպ, Տ. Չուխաջյանի 175-ամյակի առթիվ մաեստրոն պատրաստել էր հատվածներ մեծ կոմպոզիտորի «Կարինե» («Լեբլեբիջի») օպերայից, որը երգչախմբի հետ պարզապես փայլուն կատարեցին մենակատարներ Սոֆյա Բաղդասարյանը (սոպրանո), Սարգիս Աղամալյանը (տենոր) եւ Պողոս Բեազբեկյանը (բաս): Դաշնամուրային նվագակցությունը բարձր վարպետությամբ իրականացրեց երգչախմբի կոնցերտմայստեր Արամ Թուրաբյանը:

Ընդմիջումից հետո երգչախմբին միացավ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը: Հնչեց Բեթհովենի «Ֆանտազիան»: Դաշնամուրի, նվագախմբի եւ երգչախմբի համար գրված այդ «գերերկրային» երաժշտական գոհարը, որը նորին մեծություն արվեստի փառաբանությունն է եւ ձոն Գեղեցիկին, պատշաճ վարպետությամբ կատարեցին «երեք կողմն» էլ՝ դաշնակահարը, նվագախումբը, երգչախումբը՝ արժանիորեն արձագանքելով մաեստրոյի ջանքերին: Դաշնամուրի պարտիան հիանալի կատարեց միջազգային մրցույթների դափնեկիր Լիլիթ Զաքարյանը:

Համերգը եզրափակվեց Գրիգոր Հախինյանի «Սայաթ-Նովա» չնաղ կանտատով: Սա էլ՝ նվեր մեծն Սայաթ-Նովայի 300-ամյակին: Վաղուց, շատ վաղուց չէր հնչել այս հրաշալի կանտատը, որի կատարումով ժամանակին դարձյալ Կապելլան բազմիցս հանդես է եկել նախկին ԽՍՀՄ քաղաքներում, նաեւ արտերկրում:

Սայաթ-Նովայի անմահ քնարը՝ Չարենցի «Տաղարանով» ոսկեզօծված, Գրիգոր Հախինյանի ազնիվ տաղանդի շնորհիվ վեր էր հառնել որպես մաքուր մի ադամանդ, որ պսպղում էր Չեքիջյանի ձեռքերին: Այստեղ էլ իր քանքարով փայլեց Արծվիկ Դեմուրչյանը (սոպրանո), որը իսկ եւ իսկ սայաթնովյան Բլբուլն էր կարծես՝ թեւեր առած Հախինյանի կանտատում...

Արժանի ֆինալ՝ փառահեղ հոբելյանի նվիրված փառահեղ համերգի համար...

Համերգին ներկա էր Հանրապետության 1-ին տիկին Ռիտա Սարգսյանը:

Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

***Հ.Գ.*** *Դեկտեմբերի 23-ին լրանում է մաեստրո Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 84-ամյակը: Հայաստանի Ազգային ակադեմիական երգչախմբի ողջ աշխատակազմը սիրով շնորհավորում է սիրելի մաեստրոյին՝ ծննդյան օրվա առթիվ՝ մաղթելով, սրտա՛նց մաղթելով քաջառողջություն, ուժ, եռանդ, կորով, երկար ու երկար տարիների կյանք, որ միշտ շեն մնա արվեստի, սիրո ու ջերմության մշտավառ օջախը՝ Հայաստանի Ազգային երգչախումբը:*

*Սիրով միանում ենք շնորհավորանքին ու բարեմաղթանքներին:*

*www.hayernaysor.am*

# «Հայերի ներդրումը Օսմանյան կայսրությունում» գիրքը՝ ռուսերեն

Գիրքը կոչվում է «Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում», որի ռուսերեն թարգմանության շնորհանդեսն էր Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի գողտրիկ սրահում:

Դահլիճը լցվում է, ավելի քան լցվում, դանդաղ, ոչ երեւանյան սովորություն դարձած ուշացումների պատճառով, այլ ձյան ու ցրտի, քաղաքի հերթական առաջին ձյան, երթեւեկության կոլապսի պատճառով:

Ոչ միայն ժամանակի ընդունելի չափի մեջ մնացած, այլեւ լսվող ու իմաստ պարունակող (միշտ չէ, որ այդպես է) բացման խոսքն ասում է Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն, դոկտ. Կարո Վարդանյանը, վերլուծելով ու գնահատելով Ազգային ակադեմիայի Արեւելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Հասմիկ Ստեփանյանի աշխատությունը:

Ջերմ ու գնահատանքի խոսքեր են ասում նաեւ Մատենադարանի գիտաշխատող, գիտությունների թեկնածու Արմեն Տեր-Ստեփանյանը, խմբագիր, արվեստաբան Կարեն Միքայելյանը, թատերագետ Բախտիար Հովակիմյանը, ՀՀ ԳԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանը, «Եվրասիա» հիմնադրամի տնօրեն Գեւորգ Տեր-Գաբրիելյանը, որոնց ընդմիջում են Երեւանի Կոմիտասի անվան երաժշտանոցի ուսանողներն իրենց բացառիկ կատարումներով: Նրանց ուսուցչի՝ նույն երաժշտանոցի պրոֆեսոր Ռաֆիկ Հակոբյանի կազմած ծրագիրը բարձրաճաշակ է եւ այն գերազանցվում է շնորհիվ վոկալի կատարելության:

Դառնանք գրքին: Ինչպես միշտ, «Գասպրինտ» տպարանը կատարյալ է, գիրքը շքեղ է, չափերը՝ ներշնչող, 750 էջի սահմանում, բացառիկ թղթի վրա:

Մեկ ինֆորմացիոն նյութը ծիծաղելիորեն փոքր է ընդգրկելու գրքի ծավալը, առավել եւս նշանակությունն ու այլ արժեքները, ուստի մնանք նյութի ժանրի սահմաններում եւ ասենք, որ Օսմանյան կայսրության ոչ մեկ բնագավառ կա, որում մասնակից չլինեն հայերը, որում շինիչ դեր չունենան հայերը:

Հեղինակի մեղվաջան աշխատանքի շնորհիվ ընթերցողը ոչ միայն ծանոթանում է, ասենք, գյուղատնտեսության բնագավառում հայերի մասնակցությանը, այլեւ այդ բնագավառի նշանավոր անհատների, որոնք եւ արժեւորվում են լուսանկարներով:

Ոչ միայն ծավալուն են ճարտարապետության, տպագրության, թատրոնի, երաժշտության, նկարչության եւ լուսանկարչության գլուխները, այլեւ պատվաբեր որեւէ ազգի համար, ուր երեւում են գլուխգործոցներ, հասկապես արհեստների բարձրաճաշակ նմուշների վարպետ գործեր՝ իրենց կատարումներով:

Գողտրիկ միջոցառմանը մասնակից էր Մշակույթի նախարար տիկ. Հասմիկ Պողոսյանը, որն իր սուղ ժամանակը տրամադրեց ցերեկույթին ու մինչեւ չլսեց երիտասարդ կատարողների ձայնն ու արվեստը, դահլիճից չհեռացավ:

Բարի երթ գրքին, նրա այլ լեզուներով թարգմանվելու վստահությամբ:

ՌՈՒԲԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

***Հ. Գ.*** *Գրքի թուրքերեն թարգմանությունը եւ տպագրությունը նախաձեռնել է «Եվրասիա» հիմնադրամը:*

*Գրքի տպագրությունը ֆինանսավորել է պոլսահայ համայնքը:*

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ

# Կայացավ ասմունքի հանրապետական մանկապատանեկան 5-րդ մրցույթ-փառատոնի գալա համերգը

Ինչպես արդեն «**Ազգի**» ընթերցողներին տեղեկացրել էինք, Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի հովանու ներքո արդեն հինգերորդ անգամ կայանում է ասմունքի հանրապետական մանկապատանեկան մրցույթ-փառատոնը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն իր հոբելյանական ցանկում ընդգրկել է հայ անվանի աշուղ, բանաստեղծ Սայաթ-Նովայի 300-ամյա հոբելյանը, այս տարվա ասմունքի փառատոնը նվիրվեց Սայաթ-Նովայի 300 եւ Եղիշե Չարենցի 115-ամյա հոբելյաններին:

Հինգ տարի առաջ ԱԺ նախագահի Հովիկ Աբրահամյանի հավանությանն ու հովանավորությանն արժանացավ ասմունքի փառատոն անցկացնելու գաղափարը, որի հեղինակն էր ռեժիսոր, լրագրող Մարիետա Մակարյանը: Փառատոնի նպատակը խիստ արդիական է՝ փորձել երիտասարդ սերնդի ուշադրությունը մեկ անգամ եւս բեւեռել հայրենի գրականությանը, սատարել գալիք սերնդի մեջ հայոց լեզվի ու պոեզիայի նկատմամբ սիրո վերածննդին, շարունակելի դարձնել հայ ասմունքի հարուստ ավանդույթները:



Ս. Ս.

Եթե անդրանիկ փառատոնին հանրապետության բոլոր մարզերից, Երեւանից, Արցախից ու Ջավախքից մասնակցել էին 5000 դպրոցականներ, ապա տարեցտարի նրանց թիվը կրկնապատկվեց, բազմապատկվեց ու հասավ 170.000-ի: Օրերս Երեւանի Չարենցի անվ. դպրոցում կայացավ փառատոնի եզրափակիչ փուլը, որին մասնակցում էին երկու փուլեր անցած 89 ասմունքողներ: Հենց նրանցից լավագույն 23-ը գրավեցին մրցանակային տեղեր:

Հակոբ Պարոնյանի անվ. երաժշտական կոմեդիայի թատրոնում կայացավ ասմունքի փառատոնի գալա համերգն ու մրցանակների տվչության արարողությունը: Այդ հանդիսավոր միջոցառմանը ներկա էին ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, փոխնախագահ Հերմինե Նաղդալյանը, ԱԺ հանձնաժողովների ղեկավարները, պատգամավորներ, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, մարզպետներ, մտավորականներ, ուսուցիչներ, համայնքների ղեկավարներ եւ շատ ու շատ հյուրեր:

Գալա համերգը բացելու պատիվը տրվել էր Արագածոտնի մարզի Կարբիի Վահան Թեքեյանի անվ. միջն. դպրոցի «Լուս-աստղ» քառաձայն երգչախմբին (խմբավար՝ Մարիետա Մկրտչյան), որն էլ կատարեց Սայաթ-Նովայի երգերից եւ Եղիշե Չարենցի բառերով ստեղծագործություններ:

Մինչ հանդիսավարներ՝ ՀՀ վաստ. արտիստ Սարգիս Նաջարյանն ու դերասանուհի Լուիզա Ղամբարյանը բեմ կհրավիրեին երջանիկ 23 հաղթողներին, խոշոր էկրանին ցուցադրվեցին փառատոնի մարզային եզրափակիչ փուլերը, որից հետո իրար հաջորդելով ասմունքում, երգում էին մրցանակակիրները:

Փառատոնի կարեւորությունը բարձր գնահատեցին ու արժեւորեցին ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ժյուրիի անդամ Սամվել Մուրադյանը եւ ԱԺ պատգամավոր Տաճատ Վարդապետյանը: Մրցանակակիրներին ողջունեց, շնորհավորեց եւ բարեմաղթանքներ հղեց ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը: Ի դեպ, պրն Աբրահամյանի հրամանագրով ՀՀ ժող. արտիստ, ժյուրիի անդամ Գուժ Մանուկյանը ծննդյան 75-ամյա հոբելյանի առթիվ պարգեւատրվեց Ազգային ժողովի պատվո մեդալով, իսկ փառատոնի ծրագրի հեղինակ, ժյուրիի պատասխանատու քարտուղար Մարիետա Մակարյանը եւ ժյուրիի անդամ, բան. գիտ. թեկնածու, Ե. Չարենցի անվ. արվեստի ու գրականության թանգարանի տնօրեն Կարո Վարդանյանը պարգեւատրվեցին ՀՀ ԱԺ-ի պատվոգրով: Գուժ Մանուկյանը խորին շնորհակալություն հայտնեց պրն Աբրահամյանին նման հաճելի անակնկալ մատուցելու եւ իր ծննդյան հոբելյանական հանդիսությունը հովանավորելու համար: Շնորհակալական խոսքեր ասացին նաեւ Կարո Վարդանյանը եւ Մարիետա Մակարյանը:

Եկավ ամենասպասված պահը: ԱԺ նախագահի ձեռքից մրցանակներ ստացան ասմունքի փառատոնի գրանպրիի արժանացած Արարատի մարզի Այնթապի միջն. դպրոցի սան Անահիտ Նիկողոսյանը՝ ստանալով ԱԺ պատվոգիր եւ նոթբուք: Երկու տարիքային խմբերում՝ 11-14 եւ 15-17, առաջինից-երրորդ տեղերին արժանացածներին հանձնվեց հաջորդաբար՝ համակարգիչ, հեռուստացույց, տնային կինոթատրոն եւ ԱԺ-ի շնորհակալագիր: Ամենակրտսեր մասնակցի մրցանակը՝ գեղ. գրականություն եւ DVD-ն նախագահից ստացավ Շիրակի մարզից 10-ամյա Սոֆյա Սարգսյանը: Խրախուսական մրցանակներ տրվեցին 15 լավագույն ասմունքողներին՝ գեղ. գրականություն եւ DVD: Ուրախալի էր, որ փառատոնում 15-17 տարիքային խմբում 3-րդ տեղը շահել էր Կարբիի Վ. Թեքեյանի անվան դպրոցի սան Էլյա Հարությունյանը, իսկ խրախուսականի արժանացել՝ Մաքսիմ Հակոբյանը: Առաջին տեղեր շահել էին Վայոց ձորի եւ Լոռու մարզերի ասմունքողները, 2-րդ տեղերը՝ Արցախից, վերջին 3-րդ տեղը բաժին էր հասել Կոտայքի մարզիչ ներկայացուցիչին: Տոնական ուրախ տրամադրությամբ եզրափակվեց եւս մեկ փառատոն, եւ հանդիսավարներ Լուիզա Ղամբարյանն ու Սարգիս Նաջարյանը խոստացան հանդիսականներին հանդիպել 6-րդ փառատոնին:

Ս. Ս.

# Արոնյանն ուժեղագույնն էր «կույր» շախմատում



Չինաստանում «կույր» շախմատի մրցախաղով ավարտվեցին համաշխարհային մտավոր խաղերը, որի 32 մասնակիցների թվում էին Լեւոն Արոնյանն ու Էլինա Դանիելյանը: Ի տարբերություն արագ եւ կայծակնային շախմատի մրցաշարերի, «կույր» շախմատում Լեւոն Արոնյանն իրեն հիանալի դրսեւորեց ու նվաճեց գլխավոր մրցանակը: Ավարտական 3 տուրերում Լեւոնը հաղթելով Վան Հաոյին եւ հաշտություն կնքելով Պետեր Լեկոյի ու Թեյմուր Ռաջաբովի հետ, 7 հնարավորից վաստակեց 5,5 միավոր: Արոնյանը մրցաշարն անցկացրեց առանց պարտության ու արժանիորեն նվաճեց գլխավոր մրցանակը: Նրանից կես միավորով հետ մնաց Հիկարու Նակամուրան: 3-4-րդ տեղերը 4,5-ական միավորով բաժանեցին Շահրիյար Մամեդյարովն ու Գատա Կամսկին:

Կանանց մրցաշարում Էլինա Դանիելյանը 3,5 միավորով 16 մասնակիցների մեջ զբաղեցրեց 11-րդ տեղը: Նա ավարտական 3 պարտիաներն էլ Էլիզաբետ Պյոտչի, Ջու Չենի եւ Կատերինա Լահնոյի հետ ավարտեց ոչ-ոքիով:

«Կույր» շախմատի մրցաշարի հաղթող դարձավ աշխարհի նախկին չեմպիոնուհի Հոու Յիֆանը, որը 7 հնարավորից վաստակեց 6 միավոր: Նա կրեց միայն մեկ պարտություն՝ զիջելով 2-րդ տեղը զբաղեցրած Վիկտորիա Չմիլիտեին: Վերջինս վաստակեց 5,5 միավոր: 3-րդ տեղը 4,5 միավորով գրավեց ԱՄՆ-ը ներկայացնող Աննա Զատոնսկիխը:

# Մեսիի տարեկան վաստակը կկազմի 34,5 մլն եվրո



Իսպանական «Բարսելոնը» համաձայնության է եկել իր 3 առաջատար ֆուտբոլիստների՝ Լիոնել Մեսիի, Խավի Էռնանդեսի եւ Կառլես Պույոլի հետ պայմանագրի ժամկետի երկարաձգման հարցում: Մեսիի հետ նոր պայմանագիր կկնքվի մինչեւ 2018-ի հունիս, իսկ մյուս երկու ֆուտբոլիստների հետ՝ մինչեւ 2016-ի ամառ:

Առավել երկարատեւ են տեւել բանակցություններն աշխարհի լավագույն ֆուտբոլիստ Մեսիի հետ: Սկզբնական շրջանում «Բարսելոնը» պատրաստ էր Մեսիին վճարել տարեկան 13,5 մլն եվրո առանց պարգեւավճարների: Սակայն Մեսին համաձայն չէր: Ըստ իսպանական լրատվամիջոցների, նա պահանջել էր 15 մլն եվրոյից ոչ պակաս աշխատավարձ: Նշենք, որ Մեսիի ներկայիս աշխատավարձը 10,5 մլն եվրո է: Ընդ որում նրա պայմանագրում կետ կա, որի համաձայն, յուրաքանչյուր տարի նրա աշխատավարձը բարձրացվելու է 2,5 մլն եվրոյով: Բացի այդ էլ, ըստ պայմանագրի, Մեսիին են պատկանում գովազդային նպատակներով իր լուսանկարներն օգտագործելու բոլոր իրավունքները: Իսկ դա ֆուտբոլիստին լրացուցիչ մեծ եկամուտ է ապահովում:

Մեսին ակումբի հետ նոր պայմանագիր կկնքի 2013-ի հունիսին: Ըստ ՖԻՖԱ-ի նոր կանոնակարգի, պայմանագրի առավելագույն ժամկետը չպետք է գերազանցի 5 տարին: Իսպանական լրատվամիջոցներն արդեն հաշվարկել են, որ հաշվի առնելով բոլոր պարգեւավճարներն ու եկամուտները, Մեսին տարեկան 34,5 մլն եվրո կվաստակի:

Մեսիի նման, Պույոլն ու Խավին էլ «Բարսելոնի» ֆուտբոլի դպրոցի սաներ են: Խավին թիմի կազմում դարձել է չեմպիոնների լիգայի եռակի գավաթակիր, 2 անգամ նվաճել է Եվրոպայի Սուպերգավաթը, 6 անգամ արժանացել է Իսպանիայի չեմպիոնի տիտղոսին: 2-ական անգամ էլ ֆուտբոլիստը դարձել է Իսպանիայի գավաթակիր ու աշխարհի ակումբային առաջնության հաղթող: Նա նաեւ Իսպանիայի ազգային հավաքականի առաջատարներից մեկն է, որի կազմում դարձել է աշխարհի չեմպիոն եւ Եվրոպայի կրկնակի չեմպիոն: Խավիի տարեկան աշխատավարձը 7,5 մլն եվրո է:

Կառլես Պույոլը 17 տարի «Բարսելոնի» կազմում է: Թեեւ թիմի ավագն արդեն 34 տարեկան է, «Բարսելոնը» նրան մինչեւ 2016-ը նոր պայմանագիր է առաջարկել: Նրա տարեկան աշխատավարձը 5 մլն եվրո է:

# Կլիչկոն տիտղոսը պետք է պաշտպանի Պովետկինի հետ մենամարտում

Բռնցքամարտի համաշխարհային ընկերակցության (WBA) ղեկավարությունը Վլադիմիր Կլիչկոյին տեղեկացրել է, որ նա պարտավոր է աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը մինչեւ 2013-ի փետրվարի 26-ը պաշտպանել Ալեքսանդր Պովետկինի հետ մենամարտում: Կողմերը պետք է մինչեւ 2013-ի հունվարի 17-ը պայմանավորվեն մենամարտի անցկացման շուրջը, այլապես WBA-ն մրցույթ կանցկացնի:

Հիշեցնենք, որ Վլադիմիր Կլիչկոն գերծանրքաշային կարգի աշխարհի բացարձակ չեմպիոնն է: Նրան են պատկանում IBF-ի, WBO-ի եւ IBO-ի վարկածներով չեմպիոնական գոտիները: Երբ 2011-ի հուլիսին Վլադիմիր Կլիչկոն բրիտանացի Դեւիդ Հեյից խլեց նաեւ WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոնի գոտին, WBA-ի ղեկավարությունը Կլիչկոյին հռչակեց այդ վարկածով սուպերչեմպիոն: Այնպես որ WBA-ի վարկածով աշխարհի սովորական չեմպիոնի տիտղոսը թափուր մնաց:

Այդ տիտղոսի համար մենամարտում Ալեքսանդր Պովետկինն օգոստոսի 27-ին միավորներով հաղթեց Ուզբեկստանը ներկայացնող Ռուսլան Չագաեւին: Դրանից հետո Պովետկինը 3 անգամ հաջողությամբ պաշտպանեց WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը՝ նոկաուտի ենթարկելով Սեդրիկ Բոսվելին ու Հասիմ Ռահմանին, միավորներով հաղթելով Մարկո Հուկին: Պովետկինը պրոֆեսիոնալ ռինգում առայժմ անպարտելի է: Նա շահել է բոլոր 25 մենամարտերը, որից 17-ը՝ նոկաուտով:

Հետաքրքրական է, որ Վլադիմիր Կլիչկոյի հետ Պովետկինը պետք է մենամարտեր դեռեւս 2008-ի դեկտեմբերին: Սակայն նա հոկտեմբերի վերջին վնասվածք ստացավ ու մենամարտը չկայացավ:

Վլադիմիր Կլիչկոն վերջին մենամարտն անցկացրել է նոյեմբերի 10-ին լեհ բռնցքամարտիկ Մարիուշ Վախի հետ, որը մինչ այդ չէր պարտվել: Համբուրգում կայացած մենամարտն ավարտվեց ուկրաինացու հաղթանակով, որը 59-րդն էր: Կլիչկոն ընդամենը 3 անգամ է պարտվել:

ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

# Կորյուն Սողոմոնյանը նվաճեց Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը



**Կալինինգրադում վերջնագիծը հատեց բռնցքամարտի Եվրոպայի 19-22 տարեկանների առաջնությունը: Հայաստանի ներկայացուցիչներից եզրափակիչ հասած 2 բռնցքամարտիկներից Կորյուն Սողոմոնյանին հաջողվեց նվաճել Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Կորյունը մինչեւ 49 կգ քաշային կարգում եզրափակիչում 11-10 հաշվով առավելության հասավ Իռլանդիան ներկայացնող Հյուգ Մաեռսի նկատմամբ: Հիշեցնենք, որ Կորյունը աշխարհի պատանիների կրկնակի չեմպիոն է: Այդ տիտղոսներից մեկը նա նվաճել էր Երեւանում անցկացված աշխարհի պատանեկան առաջնությունում:**

**Մինչեւ 56 կգ քաշային կարգում եզրափակիչ էր մտել Արամ Ավագյանը, որի մրցակիցը ռուսաստանցի Վլադիմիր Նիկիտինն էր: Արամին չհաջողվեց առավելության հասնել մրցակցի նկատմամբ՝ բավարարվելով արծաթե մեդալով:**

**Մինչեւ 52 կգ քաշային կարգում էլ Հայաստանին բրոնզե մեդալ էր պարգեւել Նարեկ Աբգարյանը, որը կիսաեզրափակիչում պարտվել էր ռուսաստանցի Վասիլի Վետկինին:**

# Պատանի սուսերամարտիկների հաջողությունը

Սուսերամարտի Հայաստանի պատանեկան հավաքականը դարձել է Ռիգայում անցկացված միջազգային մրցաշարի հաղթող: Եզրափակիչում մեր սուսերամարտիկները 45-42 հաշվով պարտության են մատնել Լատվիայի հավաքականին:

Հայաստանի հավաքականի կազմում մրցաշարին մասնակցել են Մայքլ Հովհաննիսյանը, Էմիլ Դանիելյանն ու Արմեն Դալլաքյանը:

Անհատական մրցումներում Էմիլ Դանիելյանը դարձել է 3-րդ մրցանակակիր: Ընդ որում՝ բրոնզե մեդալի համար պայքարում նա պարտության է մատնել իր թիմակից Մայքլ Հովհաննիսյանին:

# Հայ մարմնամարզիկների վստահ ելույթը

Մոսկվայում անցկացված սպորտային մարմնամարզության օլիմպիական չեմպիոն Միխայիլ Վորոնինի հուշամրցաշարում հաջող հանդես եկան հայ մարմնամարզիկները:

Առանձին գործիքների վրա վարժություններում հաղթող ճանաչվեցին Հարություն Մերդինյանն ու Արթուր Թովմասյանը: Հարությունն անգերազանցելի էր նժույգաթափում, իսկ Արթուրը լավագույնն էր օղակների վրա վարժությունում:

Իր վստահ ելույթով դրվատանքի է արժանի նաեւ 14-ամյա Արսեն Գասպարյանը: Նրան հաջողվեց հաղթահարել նախնական փուլի արգելքն ու իրավունք ստանալ 8 ուժեղագույնների մրցավեճում վիճարկելու մրցաշարի պարգեւները: Եզրափակիչում Արսենը գրավեց 5-րդ տեղը:

Մրցաշարում վիճարկվեցին նաեւ թիմային մրցապայքարի պարգեւները: Հայաստանը ներկայացրած Սերոբ Սողոմոնյան-Արթուր Դավթյան զույգը հավասարապես հաջող ելույթներ ունեցավ բոլոր 6 գործիքների վրա էլ ու գրավեց 2-րդ տեղը: Մեր երկյակը զիջեց միայն Ճապոնիայի ներկայացուցիչներին: 3-րդ տեղը գրավեց ռուսական զույգը:

# ՀՀ հավաքականը տարին եզրափակեց 75-րդ տեղում

**ՖԻՖԱ-ն հրապարակել է ազգային հավաքականների դասակարգման հերթական ցուցակը: Հայաստանի ազգային հավաքականը նախորդ ամսվա համեմատ 7 հորիզոնականով բարձրացել ու տարին եզրափակել է 75-րդ հորիզոնականում: Մեր հավաքականը վաստակել է վարկանիշային 457 միավոր, որից 137-ը՝ այս տարվա հանդիպումների շնորհիվ:**

**Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ ՀՀ հավաքականը ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակում զգալի հետընթաց է ունեցել: 2011-ի դեկտեմբերին մեր ընտրանին 612 միավորով 46-րդ տեղում էր, իսկ 2012-ի հունվարին նույնպիսի արդյունքով 45-րդն էր: Զարմանալու ոչինչ չկա, քանի որ այս տարի հավաքականը հաջող ելույթներ չունեցավ՝ հանդիպումներից միայն 4-ում հաղթելով, 5-ում պարտվելով: Աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում էլ մեր հավաքականը 3 խաղում ընդամենը 3 միավոր վաստակեց Մալթայի ընտրանու նկատմամբ նվազագույն հաշվով տարած հաղթանակի շնորհիվ:**

**Դասակարգման ցուցակը 1606 միավորով գլխավորում է Եվրոպայի եւ աշխարհի չեմպիոն Իսպանիայի հավաքականը: 2-րդ հորիզոնականը զբաղեցնում է Գերմանիայի ընտրանին, 3-րդ տեղում արգենտինացիներն են: Այս եռյակը պահպանել է իր դիրքերը: Մեկ հորիզոնականով բարձրացել են իտալացիները՝ զբաղեցնելով 4-րդ տեղը: Կոլումբիայի ընտրանին 5-րդն է՝ առաջադիմելով 3 տեղով: Անգլիան պահպանել է 6-րդ տեղը, իսկ ահա պորտուգալացիները նահանջել են 7-րդ հորիզոնական 4-րդ տեղից: 8-րդ տեղում Հոլանդիան է, որը մեկ տեղով նահանջել է: Ռուսաստանն ու Խորվաթիան պահպանել են իրենց դիրքերը 9-րդ եւ 10-րդ տեղերում:**

**ՌԴ հավաքականը նախկին ԽՍՀՄ հանրապետությունների ընտրանիներից ամենաբարձր վարկանիշն ունի: 2-րդ ցուցանիշն ունի Ուկրաինան, որը 47-րդ տեղում է: 65-րդ տեղն է զբաղեցնում Բելառուսը, 67-րդը՝ Ուզբեկստանը եւ 73-րդը՝ Վրաստանը: ՀՀ հավաքականին վարկանիշով զիջում են Էստոնիան (86-րդ), Լատվիան (106-րդ), Լիտվան (116-րդ), Ադրբեջանը (118-րդ), Մոլդովան (128-րդ), Թուրքմենստանը (129-րդ), Տաջիկստանը (136-րդ), Ղազախստանը (142-րդ) եւ Ղրղզստանը (199-րդ):**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# «Օրերի» բացառիկ համարը՝ նվիրված հայ գրատպության 500-ամյակին




Հայ տպագրության 500-ամյակի հոբելյանին եւ այս համատեքստում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երեւանը Համաշխարհային գրքի 12-րդ մայրաքաղաք հռչակելու իրադարձություններին է նվիրված «Օրերի» այս տարվա բացառիկ համարը, որի անդրադարձները հայ տպագիր մշակույթի սկզբնավորմանն ու պատմությանը եւ ներկային են վերաբերում: Նյութը ներկայացված է հիմնականում Հայաստանի պետական համապատասխան կառույցների պատասխանատուների հետ **Հակոբ Ասատրյանի** հարցազրույցների միջոցով: Ինչպես խմբագրականում է գրված, «հայ գրատպության 500-ամյակը ոչ միայն տոնելու առիթ է, այլեւ խորհելու ու դասեր քաղելու պահ», ուստի պետք է օգտագործել պահը՝ եւս մեկ անգամ վերանայելու գրի ու գրականության ժամանակակից պահանջն ու դրա հանդեպ իրական վերաբերմունքը:

Տոնակատարությունները կարող են, իհարկե, արժեւորել երեւույթը, բայց ժամանակավորապես միայն, կարեւորը, սակայն, գրական մշակույթը զարգացնելու եւ հասարակության հայացքը դրան ուղղելու շարունակական եւ լուրջ ծրագրային քաղաքականության մշակումն է: Այս ընդհանուր համատեքստում հարցազրույցներն ընթանում են մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի, նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետ Սեյրանուհի Գեղամյանի, «Գիրք եւ հրատարակչական գործի կենտրոն» կազմակերպության տնօրեն Էդվարդ Միլիտոնյանի, Մատենադարանի տնօրեն Հրաչյա Թամրազյանի, նույն հաստատության ավագ գիտաշխատող Վարդան Դեւրիկյանի, «Էդիտ Պրինտ» հրատարակչության տնօրեն Մկրտիչ Կարապետյանի, «Հայագիտակ» ընկերության նախագահ Ալբերտ Խոյանի, ամերիկահայ գրականագետ, հրապարակախոս Երվանդ Ազատյանի, արվեստագետ-երգիծանկարիչ Սուքիաս Թոռոսյանի, գեղանկարիչ Արարատ Սարգսյանի եւ այլոց հետ:

Հայ գրատպության 500-ամյակի հիմնական տոնակատարությունները սկիզբ առան Մատենադարանից: Հայաստանում եւ միջազգային երկու խոշոր ցուցահանդեսներում (Վենետիկ եւ Ամստերդամ) Մատենադարանը ներկայացել է լավագույն ձեռագրերով: Այս մասին, նաեւ Մատենադարանի նոր շենքի բացման, հնի վերանորոգման ու նոր վերադասավորումների, ձեռագրերի ու հնատիպ գրքի ցուցադրությունների նոր հնարավորությունների շուրջն է Հրաչյա Թամրազյանի հետ զրույցը:

**Վարդան Դեւրիկյանի** «Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում» եռահատորյակի առաջին հատորի լույս ընծայման առիթով հեղինակն անդրադառնում է աշխատության բովանդակությանը եւ կառուցվածքին: Ըստ նրա, մինչեւ հիմա հայ տպագրության վերաբերյալ ուսումնասիրությունները եղել են պատմամշակութային (Լեո), գրքարվեստի (Գարեգին Լեւոնյան), տպագրական-գրքագիտական (Ռաֆայել Իշխանյան) համատեքստում՝ ունենալով կարեւոր մի բացթողում՝ գրքի բովանդակությունը: Ինքը փորձել է պատասխանել, թե «հայ գիրքը ինչ բովանդակություն է ունեցել իր սկզբնավորման պահից, ինչ մոտիվներ են գերիշխել, ինչ ժողովածուներ են տպագրվել եւ ինչպես է տեղի ունեցել անցումը ձեռագիր գրքից տպագիր գրքին»: Փորձել է ցույց տալ, թե տեխնիկապես ինչպես է դա արտահայտվել՝ թե՛ գրային, թե՛ զարդագրային, թե՛ իմաստաբովանդակային առումներով:

Հետաքրքրական է հանդիպումը **Ալբերտ Խոյանի** հետ. «Գրքերի աշխարհ»-ի տասը տարվա խմբագիրն (1981-91) իր թերթը համարում է զարմանալի, որովհետեւ առաջին էջից մինչեւ վերջին էջը միայն գրքի մասին է եղել եւ ոչ մի անդրադարձ՝ կուսակցական որոշում-համագումարներին, որի համար էլ, ըստ նրա, ժողովուրդը սիրել է այդ թերթը. ասվածի հաստատումը մինչեւ 300 հազարի հասնող տպաքանակն էր:

Անդրադառնալով նախկին եւ ներկա հասարակարգերի քաղաքատնտեսական փոփոխություններով պայմանավորված արժեքային-բարոյական նորագոյացումներին. նա այսօրը համարում է մշակույթի համար խիստ անբարենպաստ, որովհետեւ կենսական առաջնայնության խնդիրները ժողովրդի գիտակցության մեջ մթագնել են գիր, գիտություն, մշակույթ հասկացությունները. «Հիմա մենք ագահության շրջանում ենք, երբ ագահության ալիքն անցնի, երբ ստեղծվի ներդաշնակ մի հասարակարգ, այդ ժամանակ կտրուկ շրջադարձ կլինի դեպի գիրքն ու ընթերցանությունը»:

Իր ղեկավարած «Հայագիտակ» ընկերության կողմից այս տարիներին տպագրվել է արժեքավոր գրականություն, որոնցից մոտ 30-ը քարե կազմով գրքեր՝ Չարենց, Տերյան, Թումանյան, Պուշկին, «Ամենայն հայոց կաթողիկոսներ», Կարեն Դեմիրճյան, դրանց մեջ կան նաեւ ոսկե հարթաքանդակված կազմով 3 գիրք: Դասական գրականության «Գիր» մեծածավալ մատենաշարի առաջին գիրքը «Գանձարան հայ հին բանաստեղծության» ժողովածուն է: Իսկ վերջերս տպագրված «Սեւ գիրք»-ն ընդգրկում է «Հայագիտակ»-ի «Օտար նշանավոր մարդիկ Հայաստանի մասին» 4 հազար անուն ընդգրկումով քարտարանից ընտրված Հայոց ցեղասպանության մասին օտարազգի շուրջ 140 հեղինակի ժամանակին գրած հոդվածներն ու ելույթները: Այժմ պատրաստվում է գրքի թուրքերեն թարգմանությունը, նաեւ անգլերեն հրատարակությունը:

Վահան Թեքեյանի բանաստեղծությունների «Հատընտիր» նորընծա ժողովածուի առիթով հարցազրույցը գրքի կազմող եւ խմբագիր **Երվանդ Ազատյանի** հետ արժեքավոր ընդհանրացումներ է պարունակում Թեքեյանի պոեզիայի եւ նրա անհատականության մասին, գնահատական-վերաբերմունք՝ սփյուռքի եւ հայաստանյան ներկա գրական ընթացքին ու գրականությանը, նկատելով, որ սփյուռքում հայ գրողի, հայ գրքի վիճակը անմխիթար է, սակայն հայ գրքի սակավությունը հատուցվում է անգլիատառ գրողների արժեքավոր գրականությամբ, որոնք լույս են տեսնում ոչ միայն հայկական հրատարակություններով, նաեւ՝ ամերիկյան: Միանգամայն անկեղծ է Ազատյանը իր գնահատումներում ժամանակակից հայաստանյան գրականության հանդեպ:

«Դեռ ժամանակը չի եկել, որ երգիծանկարչությունը Հայաստանում զարգանա: Երբ ամբիցիաները կսառչեն եւ կհասկանան, թե ինչ են կորցրել, այն ժամանակ կսկսեն մտածել այս ուղղությամբ», այսպես է կարծում երգիծանկարիչ **Սուքիաս Թոռոսյանը**: Նրա կարծիքով, երկրում տիրող դեմոկրատիայի կամ ազատության մասին կարելի է դատել, ելնելով այն բանից, թե երգիծանկարչությունը որքան է զարգացած այնտեղ: Իսկ երբ երգիծանկարիչները տարին մեկ անգամ են ցուցադրվում, այն էլ՝ ապրիլի 1-ին, սա արդեն անառողջ վիճակի նշան է: Ս. Թոռոսյանի հետ զրույցի առիթը հայոց այբուբենին նվիրված նկարաշարն է, որի ցուցադրությունը սեպտեմբերին կայացավ Նկարիչների միության սրահում, որից հետո այն տեղափոխվեց Շուշիի պատկերասրահ: Նրա հետ զրույցը ընթանում է արվեստագետի ստեղծագործական, բեմական, նաեւ ընտանեկան կյանքի շուրջը, անդրադառնում իր վերաբերմունքին ժամանակակից հայ արվեստին, մասնավորապես պարարվեստի աղավաղումներին:

Գրատպության մշակույթի, սեփական գիրք-նախագծերի, միջազգային ցուցահանդեսներում հայ գրքերի հաջողությունների, ժամանակակից կերպարվեստի մասին է **Արարատ Սարգսյանի** խոսքը: Ըստ նրա, «Ժամանակակից արվեստը կարող է մարդկային մեծ մասի համար ընկալելի չլինել, բայց զարգացնում է էսթետիկական միտքը»:

Գրատպության 500-ամյակին նվիրված հետաքրքրական հոդվածներ ու տեղեկություններ է պարունակում հանդեսը, ինչպես՝ **Արամայիս Միրզախանյանի** «Հայ տպագրության 500-ամյակը եւ Նոր Ջուղայի հայկական տպարանի դերը», **Արծվի Բախչինյանի** «Աշխարհի հայազգի տպագրիչները», **Հովսեփ Նալբանդյանի** «140.000 անուն հայ գիրք՝ հայ գրատպութեան 500-ամեակին» եւ այլն: Հայ գրավոր մշակույթին իր խոնարհումն է բերում լեզվաբան-գրաբարագետ **Հայկուհի Հովհաննիսյանը**՝ «Տաճար քերթության» չափածով ստեղծագործությամբ:

Հայ գիր ու գրականության ներկայացմանը եւ դրա պահպանմանն ուղղված հոդվածների, հարցազրույցների «Օրերի» այս թողարկումը նաեւ մեր ժամանակակցի վերաբերմունքն է ազգային կարեւորագույն արժեքներին: Եվ վերջապես, գրատպության 500-ամյակը, մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանի** խոսքերով, լավագույն առիթն է, որ «գրքի մշակույթի վերաիմաստավորման միջոցով մենք իմաստավորենք նաեւ մեր տեղը համաշխարհային մշակույթի մեջ: Այդ նպատակին հասնելու համար պետք է փորձենք մեր մշակույթն այլ մշակույթների մեջ»:

**ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ**


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Հայտարարություն սերվերների ձեռք բերման մրցույթի**

Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) հրավիրում է բոլոր հետաքրքրված համակարգչային մատակարար կազմակերպություններին մասնակցելու համալսարանի համար սերվերների գնման նպատակով անցկացվող մրցույթին: Սերվերների անհրաժեշտ տեխնիկական բնութագրերի, քանակի, գնման եւ առաքման պայմանների, երաշխիքային սպասարկման պահանջների վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաթեթը ստանալու նպատակով կարող եք դիմել ՀԱՀ, Մարշալ Բաղրամյան պողոտա 40 հասցեով (հեռ. 51 27 25, Լուսինե Գիգոյանին): Մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման վերջնաժամկետն է դեկտեմբերի 28-ը, ժամը 16.00-ն:


## Հայտարարություն

2012թ. դեկտեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում (ք. Երեւան, Մելիք-Ադամյան 1) տեղի կունենա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարզ ընթացակարգով տրված լիցենզիաների գործողության կասեցման եւ դադարեցման համար եզրակացություններ տվող հանձնաժողովի նիստը:

Օրակարգում՝

1. Անհատ ձեռնարկատեր Ռուբեն Հարությունյանին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.11.2011թ. տրված «Հրագործական ապրանքների արտադրության, ներմուծման կամ առեւտրի» թիվ ՊԼ-5474 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ 14.12.2012թ. դիմումի քննարկում:

***ՀՀ ֆինանսների նախարարություն***

## ՕՐԱԿԱՐԳ

**2012թ. դեկտեմբերի 26-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ ֆինանսների նախարարությունում (Մելիք-Ադամյան 1) կայանալիք վիճակախաղերի, շահումով խաղերի եւ խաղատների լիցենզավորման հանձնաժողովի նիստի**

▼ «Լոնգ-Սպլիտ» ՍՊԸ, «ՄԻԼ-ՆԻԿ» ՍՊԸ, «ՎԱԼ-ՆԱՐ» ՍՊԸ եւ «ԱՄԱՏԻԿ» ՍՊԸ կողմից ներկայացված շահումով խաղի կազմակերպման լիցենզիա ստանալու հայտերի քննարկում:

▼ «Սուր Ակնթարթ» ՍՊԸ կողմից ներկայացված խաղատան կազմակերպման լիցենզիա ստանալու հայտի քննարկում:

▼ «Պանիստար» ՍՊԸ (ԽՏ-040 լիցենզիա) կողմից ներկայացված խաղատան շահումով խաղերի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգին համաձայնություն տալու հարցի քննարկում:

▼ «Լենդ-Գեյմ» ՍՊԸ (ՇԽ-230 լիցենզիա) շահումով խաղի կազմակերպման լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու հարցի քննարկում:

***ՀՀ ֆինանսների նախարարություն***





ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112


Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 19.12.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: